Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

Վրթանես Փափազյան

Ձելեբ

Էրզրումի ջելեբ /Անասունի առևտրով զբաղվող/ Մուստաֆան ավելի լավ էր համարել իր տունը վարձել Մալ-մեյդանի կոչվող անասունների հրապարակի մոտ. ուստի և Մուռտառ-ջրի վրա նա գտել էր մի բնակարան, որի լուսամուտները նայում էին հրապարակին:

Առավոտները Մուստաֆա աղան զարթնում էր հրապարակի վրա տեղի ունեցող աղմուկից, իսկույն լվացվում էր, իջնում էր հրապարակը, նստում էր մի սրճատուն, սուրճ էր խմում, ծխում ներգիլեն և որովհետև սրճատուն էին լցվում միշտ իր ծանոթ մատրաբազներ /Անասունի և այլ առևտուրով օգտվող խաբեբաներ/ և ուրիշ ջելեբներ ևս, նա սկսում էր նրանց հետ մի խոսակցություն բանալ, չմոռանալով հայացքը միշտ հրապարակի վրա պահելով զննել, թե այնտեղ ինչ էր կատարվում ժխորի մեջ:

Աշնանային մի առավոտ, երբ նա նոր էր ներգիլեի փողը բերանին տարել՝ ծալապատիկ նստած սրճատան թախտի վրա և հենված լուսամուտի քիվին, սրճատուն մտավ մատրաբազ Սադոն, բարևեց, նստեց Մուստաֆա աղայի կողքին, և երբ վերջինիս հրամանով Սադոն առավ սրճագործի մատուցած սուրճը, Մուստաֆա աղան մի սուր հայացք ձգելուց հետո հրապարակի վրա, այսպիսի խոսակցություն սկսեց Սադոյի հետ:

— Սադո,— հարցրեց նա մատրաբազին,— այսօր տավար ունի՞ս ծախելու:

— Շատ ունիմ, երեկվա ոչխարներս դեռ չեն ծախվել,— պատասխանեց Սադոն:

— Ինչո՞ւ, ղասաբ Հասանը որի՞ց էր առել ուրեմն 15 հատ ղոչ ոչխարները:

— Հինգը ինձնից առավ, իսկ մյուսները՝ Օմարից:

— Էդ ո՞ր Օմարն է:

— Գյավուր-բողանցի /Մի թաղ է Էրզրումում/ Օմարը:

— Հա, ճանաչում եմ, նրան որտեղի՞ց էր այդքան ոչխար:

— Մի քուրդ առավ երեկ ու տեղն ու տեղ էլ ծախեց ղասաբ Հասանին, տասը ղուրուշ ավելով:

— Հատի՞ն... Լավ աշխատանք է, ալլահ յուչյուն /Աստված վկա/, ես երկու օրվա մեջ էլ չեմ կարող այդչափ աշխատել. է, եզներ էլ չունի՞ս:

— Երկու հատ կա, որ էսօր եթե չծախեմ, էգուց կսատկին. հալ չի մնացել վրաները:

— Երևի խոտ չես տալիս:

— Ինչո՞ւ իզուր տեղ խոտ տամ, թաց յոնջա եմ տալիս, հերիք չի՞:

— Տունդ չքանդվի,— ծիծաղեց Մուստաֆան,— թաց յոնջան խո տավարին կուռեցնի միայն, չի կշտացնի:

— Ի՞նչ եմ անելու ծախվելիք տավարի կշտանալը,— ծիծաղեց մատրաբազը,— իմ ուզածս նրանց ուռիլ ու չաղ երևալն է, այդպես էլ անում եմ:

— Վարպետ ես եղել, ալլահ յուչյուն... ի՞նչ արիր էն կաղ ձիդ, ծախեցի՞ր:

— Ուզածիդ պես. մի հիմար գյուղացի գտա ու 300 ղուրուշով կապեցի գլխին:

— Վա՛, էդ խո շա՜տ վարպետն ես եղել, դաղած ձի էր, որ տերը գտնի, խո ձեռքիցը կառնի:

— Ինձի՞ ինչ. ես 300 ղուրուշ ջիբս դրի, ինքը գիտե իր ձին, կուզե տիրոջը տա, կուզե պահի:

— Որ կարողանա չի տալ. առնողը մյուսյուլմա՞ն էր, թե՞ հայ:

— Հայ էր, ես սկի գողացված ապրանքը կծախե՞մ մյուսուլմանի:

— Կրկնում եմ,— ասաց հիացած Մուստաֆան,— լավ վարպետ ես եղել. ո՞վ գիտե, գուցե ծախելուց հետո էլ տիրոջը իմաց ես տվել, թե իր գողացված ձին որի մոտն է:

— Ի՞նչ ես ասում,— գոչեց մատրաբազը,— ես այդչափ ինսաֆսըզ /Անխիղճ/ էլ չեմ. ինձ ինչ, կարող է, թող գտնի, մանավանդ, որ ձիու տերն էլ գյավուր է...

— Հըմ,— ժպտեց հեգնությամբ Մուստաֆան,— այ, այդտեղ դու խամ ես վարվել, մեկ տասը-տասնուհինգ ղուրուշից զրկվել ես:

— Ինչպե՞ս:

— Այ, լսիր քեզ պատմեմ, թե անցյալ շաբաթ, մատրաբազ Համիդը ինչ արեց: Քյուրդի մեկը գնացել Օվայի մի գյուղից մի լավ ձի էր գողացել ու բերել 5 ոսկիով ծախել էր Համիդին: Համիդը շուն է, իսկույն իմացավ, որ ձին գողացված է, բռնեց քուրդի յասայից ու սպառնաց նրան կառավարության հանձնել, եթե չհայտներ ձին ումն է և որ գյուղից: Քուրդը անվանեց տիրոջը. բանից դուրս եկավ Օվայի մի գյավուրի, գյուղի քեհյայինն էր: Համիդը բաց թողեց քուրդին, ձին ծախեց քյաթիբ /Գրադիր/ Արիֆ էֆենդիին 15 ոսկիով, հետո լուր ուղարկեց գյավուր քեհյային, թե «ես գիտեմ որտեղ է գողացված ձին»... հասկանո՞ւմ ես. գյավուրս էլ եկավ քաղաք, Հյուսեինին մի ոսկի մուշտուլուղ տվավ և գնաց Արիֆ էֆենդիի յախայիցը բռնեց: Արիֆ էֆենդին էլ սկզբից գիտեր, որ ձին գողացված է, բայց ինքն էլ էժան էր առել ու ետ չէր ուզում տալ. գիտե՞ս, արաբական սերունդից էր ձին, լավ ոտներ, լավ գլուխ, հանգիստ վազք, մի խոսքով 30 ոսկիանոց մի քյոհլան... ինչ գլուխդ ցավացնեմ, էս ութ օր է, որ Օվացին Արիֆ էֆենդիի հետ կռիվ է անում, բանը դատարանի է ընկել, ու ես էլ գիտեմ, դու էլ գիտես, թե դատը որի կողմը կվճռվի... հա՛, հա՛ հա՛, տեսնո՞ւմ ես, ինչքան վարպետ լինիս, էլի Համիդին չես հասնիլ...

Այդ միջոցին սրճատուն էր մտնում մի հարկահավաք, որը զինվորական ֆեսը ծոծրակի վրա դրած, բարևեց երկու խոսակիցներին և նրանցից քիչ հեռու նստելով, հպարտությամբ գոչեց սրճագործին:

— Սուրճ և ներգիլե, շուտ...

— Բարի եկար, Իզեդդին էֆենդի,— թեմենդե արեցին խոսողները:

— Այդ ո՞ւր ես շտապում այդպես,— հարցրեց Մուստաֆան,— չլինի՞ գործերդ շատացել են:

— Շատանալ ասացիր ու պրծա՞ր,— գոչեց նեղացած ձայնով հարկահանը,— գործը շատ լիներ էլի վնաս չուներ, բանից դուրս է գալիս, որ խաբեբա կապալառուն ինձ հանձնել է այնպիսի գյուղեր, որոնց բնակիչները ոչինչ չունեն հարկ վճարելու համար բացի դրանից, կատաղեցնելու չափ ըմբոստ են, շատ որ զոռում ես, ասում են «որ ոչինչ չունենք, ի՞նչ տանք...»: Դու ասա, Մուստաֆա աղա, էլ ի՞նչ անես դրանց հետ. 1000 ղուրուշ եմ տվել, հասկանո՞ւմ ես, 1000 ղուրուշ եմ վճարել այդ գյուղերի համար, հույս ունենալով, որ 3000 կշահեմ, բայց, ահա, երեք օր է, որ տանջվում եմ, գնում-գալիս և դեռ 1000 ղուրուշ էլ չեմ հավաքել:

Եվ նեղացած, մեծ շառաչյունով խմեց սուրճը:

— Հըմ,— արեց Մուստաֆան մտախոհ,— այդ խո վատ բան է եղել. ով գիտե որքան պիտի չարչարվես դեռևս:

— Ով, ե՞ս,— գոչեց կատաղած հարկահանը,— Էսօրվանից շուտ չկա, կերթամ գանգատ կտամ կապալառուի վրա, և իր գյուղերը իրան կհանձնեմ, գոնե 1000 ղուրուշս կսաղանա:

— Վատ չի լինի,— դիտեց Մուստաֆան,— վատ չի լինի, եթե 1000 ղուրուշդ ետ կարողանաս ստանալ, հավաքածիդ հետը գումարելով 2000 կանե. երեք օրվա մեջ մի գումար՝ մեկին մեկ շահ բերելը հանգստությամբ ու անվրդով՝ մեծ երջանկություն է, բայց...

— Բայց ի՞նչ,— գոչեց հարկահանը նեղացած, տեսնելով, թե ինչպես իր խորամանկությունը հասկացվեց:

— Բայց,— շարունակեց ջելեբը,— մարդս ստեղծված է աշխատելու և չարչարվելու համար, մի ամսվա չարչարանքը 3000 ղուրուշ եկամտի համար շատ չէ:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Ուզում էի ասել, թե ցանկանայիր փոքր-ինչ շուտ չհուսահատվել և ծուլանալ, 1000 ղուրուշով գնածդ հարկերը կարող են մի ամսվա մեջ զուտ շահ բերել 3000-ից ավելի:

— Ինչեր ես խոսում,— գոչեց նեղացած հարկահանը,— բողազս պատռվեց գոռալով, զինվորի և իմ ձեռները ցավեցին ծեծելով, բանտերը լցվել են չվճարող գյուղացիներով, բայց որ չունեն, ինչն առնես:

— Տավա՞ր էլ չունեն:

— Տավար ունեն, բայց գյուղում գնողն ո՞վ է. ես էլ չեմ կարող 50 ղուրուշի համար տավարներն առաջս անել քաղաք գալ:

— Միամիտ մարդ ես, Իլեդդին էֆենդի,— ծիծաղեց ջելեբը,— երևի շատ չես թրծվել. ի՞նչ հարկավոր է տավարը քաղաք բերել և կամ 50 ղուրուշի համար եզն ու կովը խլել, որ հետո ղալմաղալ դուրս գա, ես լինեի քո տեղը, երկու զինվոր կվերցնեի հետս, թևիս տակը կդնեի քոչանների տետրակը, մի հատ ջելեբ էլ հետս կառնեի ու գյուղերը կերթայի. տավար ունեն, ջելեբին կծախեի, տուրք ունեն՝ տավարով կառնեի... հասկանո՞ւմ ես... ես լինեի քո տեղն այդպես կանեի:

Հարկահանը զարմացած ջելեբի երեսին նայեց:

— Այո,— շարունակեց ջելեբը,— եթե կուզես, ահա ես պատրաստ եմ, փող ինչքան ուզես, հա ունեմ. միայն դու ինձ տավար տուր և զինվորներիդ էլ՝ հրաման, որ չունեցողի տավարն ինձ մոտ քարշ տան և ինչ պայմաններ, որ առաջարկեմ, ստիպեն գյուղացուն ծախելու...

— Այ լավ խելք,— ծիծաղեց Մատրաբազը,— ես իմ աստված, ինձ էլ որ տանեք, կգամ:

— Դու քո տեղդ ծանր նստիր,— ասեց խստությամբ ջելեբը,— քո բանը չէ գյուղացիների հետ խոսելն ու առուտուր անել իր գյուղում. գյուղացին իր գյուղում քաղաքի պես չէ, այնտեղ նա կռվարար է, անհասկացող է, ուշ համոզվող. այ, էս կյանքս նրանց մեջն եմ անցկացրել և քիչ ջելեբներ կան, որ ինձ նման սիրելի լինեն գյուղացիներին... Իզեդդին էֆենդի,— դարձավ նա հարկահանին,— ո՞ր կողմի գյուղերն են հանձնվել քեզ:

— Խնուսի մեջ:

— Լավ, ուրեմն, ողջ Խնուսն ինձ ճանաչում է, կուզե՞ս ես քեզ հետ գամ ու հարկերդ սաղացնեմ:

— Արի, բայց նաղդ կուզեմ:

— Շատ լավ, երբ մեկ գյուղի գործը վերջացնենք և հեռանալու լինենք այնտեղից, մինչև մյուսը հասնելը, հաշիվը կտեսնենք և առաջին գյուղի հարկը նաղդ կվճարեմ, համաձա՞յն ես:

— Համաձայն եմ. ե՞րբ գնանք:

— Վաղը. քանի որ ցորենը չէ վերցվել կալից:

— Ինչո՞ւ, ցորենի վերցվելը մեզ ի՞նչ կխառնի:

— Շատ կխառնի, գյուղացին չի դժվարանա տավարը ծախելու, երբ աչքի առաջ ունենա ցորենի դեզը և մտածի, թե գուցե ցորենի արդյունքից նորեն կարողանա տավար գնել:

— Իմ գյուղերում այժմ ցորենը հավաքած կլինեն:

— Հը՛մ,— դեմքը կնճռեց ջելեբը,— այդ վատ է. բայց ինչևիցե. ի՞նչ տեսակ հարկ է քո հարկը:

— Տավարի, իհարկե, փեթակների էլ կա:

— Ես փեթակներ էլ կառնեմ. ուրեմն վճռվե՞ց:

— Վճռվեց. էգուց առավոտյան զինվորների հետ տունդ կգամ:

— Շատ լավ, ես էլ կասեմ, որ մի լավ կերակուր եփեն. կուտենք կխմենք ու ճանապարհ կընկնենք:

2

Այն գյուղը, ուր երկու օրից ի վեր ջելեբ Մուստաֆան և անասունների տուրք հավաքող Իզեդդին էֆենդին առաջին անգամ մտնելով սկսել էին իրանց գործը, Խնուսի Քոփալ գյուղն էր: Մի գեղեցիկ այգեզարդ գյուղ, բնակված կեսը մահմեդական քուրդերով և կեսը՝ հայերով: Խրճիթներից յուրաքանչյուրը ոչ միայն իր մոտ, այլև գյուղի ծայրում ուներ իր սեփական այգին, լիքը զանազան պտղատու ծառերով և խաղողի թուփերով:

Ունենալով այգի, ունենալով շրջապատող գեղեցիկ լեռներ և դաշտեր, ուր սփռված էին անհամար անուշահոտ ծաղիկներ, գյուղացիք փեթակներ էլ էին պահում. իսկ անասուն նրանք շատ ունեին, շրջակա մարգագետինների վրա արածում էին բազմաթիվ ոչխարներ և կովեր, իսկ դաշտերից տուն էին գալիս ամեն երեկո լծի և այլն եզներ, որոնք իրանց հուժկու կազմվածքով հիացում էին ազդում: Թեջիրները, երբ գյուղից գյուղ ման գալով Հալեբ տանելու ոչխար էին գնում, մի շաբաթ անպատճառ անց էին կացնում այդ գյուղում և դուրս գալիս՝ 100-ից ավելի գառներ և ոչխարներ էին տանում:

Գյուղացին, թե քուրդը և թե հայը, աշխատասեր, քրտնող գյուղացի էր. նա հերկում էր, տնկում, խաշնը շատացնում, իր գեղածիծաղ շրջապատից օգտվում և այնտեղ մտնող, այդտեղը կապալով առնող ոչ մի հարկահան, տուրք հավաքող, իանե ժողովող, ոչ մի քուրդ և ոչ էլ մի բեգ՝ չէր զղջում. վաշխառուն ուրախությամբ էր Քոփալցիին փոխ տալիս, վաճառականը՝ ապառիկ:

Ոչխարների տուրքը հավաքող Իզեդդին էֆենդին իհարկե չէր նեղանա, եթե իր կապալով վերցրած բոլոր գյուղերը Քոփալի պես լինեին, բայց արի տես, որ Քոփալ գյուղն իսկ այդ տարի չէր կարողանում տուրքը հեշտությամբ տալ, որովհետև ամառը նրանց անասունների մեջ մի այնպիսի հիվանդություն ընկավ, որ երբ ռես հարուստ Մկոյի և Հյուսեյն աղայի տավարներից վեցը կոտորվեցին, գյուղացիք նրանց երանի էին տալիս, որ այդպես հեշտությամբ են ազատվել: Հոտը բռնել էր ամեն կողմ, անգղերը և ցիները ճախրում էին գյուղի վրա, լցվել էին դիակների վրա և շատերը այնքան կերել էին, որ չէին կարողանում տեղներից շարժվել:

Կար գյուղացի, որ մի գիշերվա մեջ կորցրել էր 3 կով, մի եզ և 10-15 ոչխար. և այդքանը շատ մեծ բան է գյուղացու համար, որովհետև ամենահարուստը նրանցից, երկրի այդ դրության ժամանակ, հազիվ կարողանում է ունենալ 4-5 կով, 4 եզ և 20-30 ոչխար:

Այդ տարի Քոփալ գյուղը աղքատ էր տավարի կողմից, այնուամենայնիվ նա տվել էր տուրքը հավաքողին ավելի քան 500 ղուրուշ. էլ ավելի չէր կարող տալ. սակայն, Իզեդդին էֆենդիի հաշիվները այդքան չէին, նա միայն Քոփան գյուղի վրա նշանակել էր 1500 ղուրուշ տուրք.

սատանան տանե, պետք է գոյացնել այդ առաջին գումարը, ապա թե ոչ, նա մյուս գյուղերում ոչինչ չէր կարող հավաքել:

Երկու օր էր, որ նա ջելեբի հետ գյուղը հասել, Հյուսեյն աղայի տունն իջել և սկսել էր գործը:

Նրանց գալու լուրը կայծակի արագությամբ տարածվեց մյուս գյուղերումն էլ և այս անդամ սարսափ պատճառեց, որովհետև լսում էին, որ ջելեբ Մուստաֆան շատ փող ունի, տավար գնելու անհագ փափագ և Իզեդդին էֆենդիի հետ սուվարիներ կան, որոնք գյուղացոց տավարները գոմերից հանելով, ջելեբի զննողության են ներկայացնում:

Քոփալ գյուղից ոչ շատ հեռու, լեռան ետևի կրծքի վրա փռվում էր նույնպես կես քուրդ և կես հայ բնակիչներով Խնուսի Աղջամելիք գյուղը:

Այդ գյուղը այգի քիչ ուներ, բայց փեթակ ուներ. աղքատիկ գյուղ էր և շատ հարկահանների տետրակների մեջ նա նշանակվում է իբր մի մաս Քոփալ գյուղի:

Իհարկե հարկահանի նորից գալը և սուվարիներ ու ջելեբ բերելը ամենից առաջ այդտեղի գյուղացոց սարսափեցրեց. հայերը հուսահատ՝ կորցրին իրանց, իսկ քուրդերը մի երեկո հավաքվեցին և գնացին Շերիֆ աղայի մոտ, նրա գոմի լոնջան, ուր շաբաթվա մեջ մի քանի անգամ ծերունի Շերիֆը հավաքում էր գյուղացիներին, եթե տաք էր, նրա առջևի մայթի վրա էր նիստ կազմում, իսկ եթե ցուրտ՝ գոմի մեջ:

Շերիֆ աղան 90 տարեկան էր, քաջառողջ մի ծերունի, որը գործից քաշված, ապրում էր հանգստությամբ և զվարճանում էր իր տան մեծությամբ ու բազմությամբ: Հինգ որդի ուներ, չորս հարս, վեց թոռներ, երեք մշակ, երկու հոտաղ, 10 կով ու եզ և 50-ի չափ գառ, ոչխար, խոյ և այծ: Հիվանդությունը այս տարի կոտորեց նրա տավարների կեսը և այժմ Շերիֆ աղան ամեն անգամ, երբ համարելով տավարները, գտնում էր օրը մի քանի հատ պակասած, մի տեսակ տխրություն էր զգում և անդադար ասում իր որդիներին.

— Երևի ծերունի Շերիֆն էլ այս տարվա ձյունը չի տեսնի, որովհետև մեռան նրա բոլոր ընկերները:

Եվ իրավ, մի շաբաթվա մեջ սատկոտեցին այն երկու եզները և մի ձին, որոնց Շերիֆը իր երիտասարդ ժամանակ բանեցրել էր դաշտում և ճանապարհորդության ժամանակ:

Շերիֆը լաց եղավ, երբ իմացրին, որ սատկել է նրա ծերունի ձին, մի օր ամբողջ տխուր մնաց, երբ տեսավ իր ընկեր երկու եզների դիակները, որոնց նրա որդիները գոմից քարշ տալով տարան ձգեցին դաշտը: Շերիֆը աչքը չզատեց այդ դիակներից, մռայլ դեմքով դիտեց, թե ինչպես անգղերը և ցիները նախ՝ պտույտներ գործեցին դիակների վրա, հետո իջան և սկսեցին գիշատել: Մինչև իսկ Շերիֆը կռացավ քար վերցնելու, որ հարվածե իր բարեկամներին կտցահարող թռչունները, բայց իսկույն սթափվեց, բարձրացավ, մի խոր հառաչ արձակեց և ամբողջ օրը տխուր մնաց:

Հենց այդ օրվա երեկոյան էր, որ գյուղի քուրդ ժողովրդից վեց աղ-սախկալներ եկան Շերիֆի մոտ. Շերիֆ աղան նստել էր «բառեժ»-ը, գլուխը կռացրել, ծնոտը ձեռքի փայտին գցել, մտածում էր:

Աղ-սախկալները պատկառանքով մոտեցան, թեմեդե արին և ասեցին.

— Սալամ ալեյքում, Շերիֆ աղա:

Ծերունին դանդաղությամբ բարձրացրեց գլուխը տխրությամբ նրանց նայեց և պատասխանեց.

— Ալեյքում սալամ:

Աղ-սախկալները քիչ հեռավորությամբ նստեցին գետնի վրա: Պահ մի լռությամբ մտածում էին ամենքը:

— Ի՞նչ նոր բան կա,— հարցրեց վերջապես Շերիֆը գլուխը բարձրացնելով:

— Հարկահավաքը եկել է,— ասեց մեկը:

— Հըմ, նորի՞ց եկել է,— կնճռեց դեմքը Շերիֆը,— մի՞թե նա չլսեց, որ գյուղացիք ոչինչ չունեն տալու... այն կողմը նայեցեք.— հարեց նա գավազանը պարզելով, — տեսնում եք այդ ցիները և անգղերը, որոնք իմ հին բարեկամ երկու եզների դիակներն են ուտում:

— Աստված գլուխդ ողջ պահի, Շերիֆ աղա:

— Է՛հ, է՛հ, որդիներս,— հառաչեց ծերունին,— զգում եմ, որ ես էլ գնալու եմ նրանց ետևից... բայց իզուր է այդ հարկահավաքը մտածում, որ եթե անցյալ անգամ Շերիֆը նրան տուրք տվավ, այս անգամ էլ ավելորդ կտա, այս անգամ, երբ դեռ նոր մեռան նրա հին ընկերները... հին ձիս էլ սատկեց,— հարեց նա փոքր-ինչ լռելուց հետո,— այդ այն ձին է, որ երկու անգամ ինձ ազատեց մահից. այո, նա էլ մեռավ, մնացել է միայն ծերունի Շերիֆը:

Աղ-սախկալները տխրությամբ գլուխները ծռեցին և նրանցից մեկը պարտք համարեց նորից մռմռալ.

— Գլուխդ ողջ մնա, Շերիֆ աղա, հայվանների համար այդքան ցավելը մեղք է:

Շերիֆ աղան գլուխը բարձրացրեց և խոսողին նայելով ասեց.

— Մե՞ղք է. այդպե՞ս ասեցիր, Կադիր, անասունների համար ցավելը մեղք է. այդ նրանք են, որոնք քեզ, քո կնոջ, քո որդիներին և թոռներին հաց են տալիս, պահում մեծացնում են, այդ նրանք են, որոնք մի կտոր խոտով բավականացած, իրանց ամբողջ կյանքը նվիրում են քեզ, քարշում են քո բեռը, հերկում քո հողը, կրում քո մտրակի հարվածները, և ոչինչ լավություն չտեսած, տաժանելի քրտինք են թափում քեզ համար, քեզ կաթ տալիս, միս տալիս, զավակ են ծնում քեզ համար և ամբողջ գոյությամբ քեզ պատկանում.. թե չէ, Կադիր, երբ աստված նրան քեզ է տվել, չէ ասել, տանջիր, օգտվիր նրա ուժերից անխնա և իսկի էլ մի ցավի նրա համար...

Աղ-սախկալներից մեկը շարժվեց և ըստ երևույթին հուզված լինելով գյուղի նահապետի խոսքերից, ասեց.

— Շատ իրավ է ասում Շերիֆ աղան, ես այս րոպեիս երկու անասուններ ունեմ, որոնց չեմ փոխի իմ բոլոր մյուս ոչխարների, այծերի և ձիանների հետ. մեկը մի կաղ էշ է, մյուսը՝ մի կով. նրանցից մեկն ընկերացել է ինձ իմ բոլոր ճանապարհորդությունների ժամանակ, իսկ մյուսը՝ իմ գոմի առաջին անասունն է, իմ գոմի հիմքը, որ 10 տարի է իր կաթով կերակրում է տունս. այժմ նրա ծծերը ցամաքել են, նա նախիր է գնում և տուն գալիս առանց օգուտ տալու, բայց նա 10 տարի տվել է իր օգուտը... ի՞նչ եք ասում, պետք է նրան մորթե՞լ, որովհետև միսը դեռ պետք կգա և կաշիից կարելի է տրեխներ շինել... ես չեմ մորթի, թեկուզ քաղցած էլ մնամ...

— Ի՞նչ կանեիր, եթե հարկահանը հենց այդ կովին քարշ տար ջելեբի առաջ,— դիմեց մի ուրիշը:

— Ի՞նչ ջելեբ,— հարցրեց Շերիֆ աղան զարմացած:

— Հարկահանն այս անգամ ջելեբ է բերել հետը:

— Երեք հատ էլ սուվարիներ,— ավելացրեց երկրորդը:

— Ջելեբն էլ Մուստաֆա աղան է,— հարեց երրորդը:

Շերիֆը գունաթափվեց և չկարողացավ ոչինչ ասել:

— Քոփալից եկողներն ասում են, որ ջելեբը շատ փող է բերել և անխտիր գնում է փեթակ ու ամեն տեսակ անասուն,— նորից խոսեց մի աղ-սախկալ:

— Սուվարիներն էլ,— ավելացրեց երկրորդը,— սվինի առաջ արած գյուղացիներին, տավարները քշում են գոմից և տանում ջելեբի առաջ:

— Ինձ էլ պատմեցին,— մեջ մտավ երրորդը,— որ Դավութենց Մարտիրոսի էն չաղ կովը գիտե՞ք, ջելեբը նրան 5 մեջիդից ավելի չէ տվել ու այդ 5 մեջիդն էլ հարկահանը գրպանը դնելով փոխարենը Մարտիրոսին է տվել իր տետրակից կտրած մի կտոր թուղթ:

— Հը՛մ,— արեց Շերիֆը մորուքը թափահարելով,— այս անգամ հայերի բանը վատ է. ես կարծում եմ, որ իսլամներն էլ զուլում պիտի տեսնեն:

Ասեց, խոր հառաչեց ու ծնոտը հենեց գավազանին:

3

Իհարկե ոչինչ ելք չունեցավ Շերիֆ աղայի մոտ ժողովված իսլամների այդ խորհուրդը, բացի այն, որ նորոգեց ծերունու թախիծը և հուսահատեցրեց մյուսներին, որոնք երկար իրենց բազմաթիվ ցավերի վրա խոսելուց հետո ցրվեցան:

Մինչ այս, մինչ այն, հարկահան Իզեդդինը և ջելեբ Մուստաֆան սկսում էին մեծ քայլերով առաջ դիմել:

Երրորդ օրը նրանք անցկացրին 15 հայ և թուրք գյուղացիների տավարների գնահատումով, հավաքեցին ինչ որ կարողացան, ծեծեցին որին որ կամեցան, ջելեբը ռեսի գոմում ժողովեց բավական տավար, որոնց բոլորի վրա նա ծախսել էր 1000 ղուրուշ և քաղաքում 3000-ով անշուշտ կծախեր. անխիղճ էր նրա առևտուրը թաքնված քաղցրաբարոյության, համոզողական ձևերի և խորհրդատու բարերարի դիմակների տակ. ժպտում էր հարկահանը, երբ տեսնում էր, թե ինչ հեշտությամբ կարողանում է իր տետրակի երեսները քչացնել և գրպանը ուռեցնել, զվարճանում էր գյուղացիների մխկտոցներով և ծիծաղաշարժ էր գտնում նրանց մռայլ հուսահատ դեմքերը, վախկոտ ստրկական հայացքները ու սուվարիների եռանդը, որով լցված, նրանք գոմերը դատարկում էին, վազնիվազ մի տունից ելնելով մյուսն էին մտնում և այնքան անզգուշությամբ էին բան գողանում, որ նրանց գրպաններից դուրս էին կախված լինում ճոթերի ծայրեր, գդալներ, թաշկինակներ, իսկ ծոցում մղված զանազան հափշտակած իրերը, նրանց կրծքին տալիս էր Ստամբոլի մադամների կուրծքերի ձևերը: Այս բոլորը կուշտ ծիծաղեցնում էր հարկահանին և նա զարմանում էր, թե ինչպես ջելեբ Մուստաֆան չէ կամենում մասնակցել իր ծիծաղին, այլ վախկոտ հայացքներ էր ձգում գյուղի մի քանի կողմում խմբված գյուղացիների վրա:

— Ի՞նչ է եղել քեզ, Մուստաֆա էֆենդի,— հարցնում էր նա ջելեբին,— կարծես, թե կինդ է մեռել կամ առևտուրդ լավ չէ գնում:

— Հը՛մ,— ասում էր ջելեբը մտախոհ,— վախենում եմ, որ քամի լինի:

— Քամին քեզ ի՞նչ կանի, խո չե՞ս մրսում,— ծիծաղում էր հարկահանը:

— Ո՞վ գիտե,— մռմռում էր ջելեբը առանց ուշք դարձնելու, որ հարկահանը բոլորովին չէր հասկանում իրան,— ո՞վ գիտե, թեև այս երկրում քամին փոթորիկի դժվար է փոխվում, բայց աշխարհիս երեսին ինչեր չեն պատահում...

Չորրորդ օրը, երբ ջելեբը գնում էր մի թուրքի կով, թուրքը չկամեցավ 5 մեջիդով իսկ տալ անասունը:

— Իմ անասունս շատ արժի,— ասեց նա դողդոջուն ձայնով:

Ջելեբը զարմացավ, որովհետև կովը շատ հասարակ անասուն էր, և իսկի իր տվածի կես գինը չարժեր, ուստի թուրքին նայեց և տեսնելով նրա մոլեգին ակնարկը գունաթափվեց.

— Ինչպե՞ս,— հարցրեց նա,— կովդ դեռ ավելի՞ էլ արժի:

— Իհարկե,— խոսեց թուրքը ավելի հաստատուն ձայնով,— իմ կովս 3 մեջիդով եմ առել ես:

— Ջելեբը ևս քան Զևս ապշում էր. նա կարծեց, թե թուրքը ցավից գժվում էր:

— Ի՞նչ ես ասում, մյուսյուլման, 3 մեջիդով առած կովիդ հինգ մեջիդ եթե տամ, չե՞ս տա:

— Չեմ տա,— շրթունքները պրկեց թուրքը:

— Վահ, էլ ի՞նչ ունիս ասելիք, քեզ երկու մեջիդ էլ շահ է տալիս,— մեջ մտավ հարկահանը:

— Շնորհակալ եմ,— ժպտաց դառնությամբ թուրքը,— իսկ քեզ ինչքան եմ պարտ:

— Հինգ մեջիդ:

Թուրքը քիչ վարանեց, հետո ցնցվեց և կարծես վճռելով չվախենալ, խոսեց.

— Այդ ինչպես բան է, որ չորս օրից ի վեր բոլոր հարկ վճարողներն էլ 5 մեջիդ պարտք ունեն քեզ, ոչ ավելի և ոչ էլ պակաս:

Հարկահանը նույնպես գունաթափվեց, դեմքը կնճռեց և գոռաց.

— Քեզ ի՞նչ, դու քո հարկդ վճարիր և կորսվիր գնա:— Հետո նայեց սուվարիներին, որոնք մի քայլ առաջ եկան դեպի գյուղացին:

Գյուղացին տեսավ այդ առաջացումը, ետ քաշվեց, մի շեշտակի հայացք ձգեց ջելեբի վրա և ասեց.

— Այնուամենայնիվ, կովս 5 մեջիդով չեմ տա:

— Ինչպե՞ս,— հարցրեց ջելեբը քիչ զսպված ձայնով. վախ էր զգում. մի ինչ-որ վատ բանի հոտ էր առնում:

— Որովհետև,— ասեց գյուղացին,— եթե հինգ մեջիդ տաս, իմ գրպանս ոչինչ չի մտնելու, իսկ դրա փոխարեն, ես կորցնելու եմ կովին տվածս 3 մեջիդը:

Ջելեբը նստած տեղից բարձրացավ, մի ակնարկ ձգեց հարկահանի վրա և իր շփոթությունը ծածկեց մեջտեղ բերած կովը քննելով:

— Եվ դու կորսվա՞ծ ես համարում թագավորին տված փողդ,— գոռաց հարկահանը:

— Աստված չանի,— պատասխանեց գյուղացին, հետո ուզեց շարունակել, բայց բերանը փակեց, մի քայլ ետ քաշվեց ու առանց ետ նայելու հեռացավ:

Նրա հեռանալու ժամանակ, ջելեբը կանգ առավ կովին զննելուց, նայեց գյուղացու ետևից, մոտեցավ հարկահանին և ցած ձայնով ասեց.

— Շուտ անենք, քանի քամին փոթորիկի չէ փոխվել... ես հրաժարվում եմ այլևս այստեղ անասուն գնելուց:

— Իսկ մյուսնե՞րը,— հարցրեց զարմացած հարկահանը:

— Որքա՞ն է ժողովածդ:

— 2000 ղուրուշ:

— Բավականացիր առայժմ. գնանք մյուս գյուղերը, հետո այս գյուղին էլի կայցելենք:

Եվ այդպես, չորրորդ օրվա երեկոյան, հարկահանը, ջելեբը և սուվարիները դուրս գալով Քոփալից Աղջամելիք հասան:

Աղջամելիք եկողը միշտ Շերիֆ աղայի տանն էր իջնում, ուստի հարկահանը և ջելեբն էլ նրա տունը գնացին: Շերիֆ աղան սառնությամբ ընդունեց նրանց, հրավիրեց իրիկնահացի, լռությամբ քնելու տեղ ցույց տվավ նրանց և առանց մի բառ իսկ ասելու հարկերի մասին, հեռացավ:

Ջելեբը հետզհետե մռայլվում էր:

— Ի՞նչ է եղել սրանց,— մռմռում էր նա ինքն իրան,— հինգ տարի առաջ դողում էին ամեն ուժի առաջ, իսկ այժմ... կարծես էլի նույն Խնուսը չէ:

Խնուսը նույնը չէր գտնում Մուստաֆա աղան, որը հինգ տարի առաջ, ոտի տակ էր տալիս նրա գյուղերը և իբր փաշա էր ընդունում իր հետ խոսել ուզող գյուղացիներին:

Խնուսը փոխված էր գտնում նա, մի ինչ-որ քամի նրա կարծիքով մտել էր այդ կողմերը և ավելի փչում էր քուրդ ժողովրդյան կողմից:

— Սրանք գյավուրներին էլ կփոխեն,— մտածեց կատաղած ջելեբը,— էլ սրանց հետ խոսել չի լինում...

4

Մյուս օրը ամպամած էր երկինքը, օդը խոնավ և մինչև իսկ՝ ցուրտ, կաթկաթում էր երբեմն անձրև և շրջակա մարգագետնի խոտերը փայլում էին թացության մեջ:

Հարկահանը դեռ քնել էր, երբ ջելեբը զարթնեց, իջավ առվի վրա, լվացվեց, նամազը կատարեց և ուշադրությամբ դիտեց գյուղից դուրս գնացող նախիրը:

— Երեկոյան պիտի գործ սկսել,— մռմռաց նա,— ինչպես երևում է, այստեղ էլ կան լավ անասուններ:

Քիչ հետո հարկահանն էլ զարթնեց, բայց Շերիֆ աղան դեռ չէր երևում, գյուղացիք, եթե պատահմամբ անցնում էին երկու պաշտոնյաների առջևից. վախկոտ հայացքներ էին ձգում նրանց վրա, խոնարհությամբ բարևում էին և կարծես փախչում էին, վախենալով նրանց հարցմունքներից:

Վերջապես Շերիֆ աղան դուրս եկավ խրճիթից և նստեց մայթի վրա: Հարկահանը և ջելեբը նրան մոտեցան:

— Բարև, Շերիֆ աղա,— ասեց հպարտությամբ հարկահանը նստելով նրա մոտ,— ի՞նչ ես կարծում, անձրև չի՞ գալու:

— Կգա,— ասեց ծերունին,— բայց ոչ թե ցերեկը, այլ գիշերը կգա:

— Այս անձրևները ձեզ օգտակար են,— մեջ մտավ ջելեբը:

Շերիֆ աղան շեշտակի նրան նայեց և սառն ու կես բերնով պատասխանեց.

— Անձրևները ամեն ժամանակ օգտակար են:

— Բայց,— խոսեց հարկահանը,— ես լսել եմ, որ հունձ ժամանակ անձրևները վնաս են տալիս:

— Այո,— եթե չափազանց գա. ամեն բան իր չափն ունի, չափից երբ դուրս գա, վնաս կտա... այո՛, ամեն բանը իր չափն ունի, նույնիսկ ուտելը, նույնիսկ...

Եվ կանգ առավ ու վարանեց:

— Նույնիսկ ի՞նչ,— հարցրեց ջելեբը,— որ սկսում էր տաքանալ, հասկանալով, թե ծերունին ուր պիտի հասներ:

— Նույնիսկ,— գոչեց ծերունին վճռական ձայնով,— նույնիսկ նախատելը, զրկելը:

Ասեց, նայեց ջելեբին, ծնոտը դրավ գավազանի վրա սկսեց աղոթել:

Հարկահանը և ջելեբը մնացին միմյանց երեսին նայելով:

— Հըմ,— ասեց ջելեբը,— մարդիկ կարողանում են փակել քարի, ծառի և հողի բերանը, կտրել նրանց լեզուն:

Շերիֆը մի վեհ ակնարկ ձգեց նրա վրա, դանդաղությամբ բարձրացավ, քայլեց դեպի խրճիթը և ասեց.

— Ինձ ներեցեք, պետք է դաշտ գնամ:

Հարկահանը, որ մինչև այդ ժամանակ լռությամբ ունկնդիր էր այդ խոսակցության, ծերունու խրճիթ մտնելուց հետո, դարձավ ջելեբին և ծիծաղելով ասեց.

— Լավ մոլլա է այս ծերունին, չէ՞, Մուստաֆա աղա...

— Վտանգավոր մոլլա է,— պատասխանեց մտախոհ ջելեբը,— նրան դիպչել չի կարելի, նրանից էլ առնելիք ունե՞ս:

— 167 ղուրուշ:

— Ձեռք քաշիր դրանից, ապա թե ոչ, կկորցնես բոլորը:

— Ձե՞ռք քաշեմ,— ծիծաղեց հարկահանը,— ամենից առաջ այդ շատախոս մոլլայի մորուքը պիտի թափահարեմ:

— Վախեցիր այդ մորուքից թափվելիք սատանաներից:

— Այ իմ թալիսմանները,— ասեց հարկահանը հեռվում կանգնած սուվարիները ցույց տալով:

— Դու գիտես,— ասեց ջելեբը ուսերը թոթվելով,— ես չեմ գնի դրա անասուններից:

— Չե՞ս գնի,— գոչեց կատաղած հարկահանը,— ուրեմն դու վախենում ես այդ քյավթառ մոլլայից:

— Վախենում եմ:

— Դո՞ւ... և դեռ եկել ես ինձ օգնելու... լսիր, Մուստաֆա, եթե դու քեզ ներկայացրած տավարներից մեկը մերժես գնելու, կիրամայեմ սուվարիներիս, ձեռքիցդ խլել բոլոր ունեցածներդ:

Ջելեբը մի լուռ հեգնական ժպիտով նրան նայեց և թողնելով հարկահանին կատաղած դրության մեջ, հեռացավ դեպի գյուղը:

— Լավ ուրեմն,— մռմռաց նրա ետևից հարկահանը,— տեսնենք ի՞նչ ունի այս ծեր շատախոսը, որ Մուստաֆան շան պես վախենում է նրանից... տեսնենք... սուվարիներ,— գոռաց նա զինվորներին դառնալով,— ետևիցս եկեք:

Եվ ձեռքը կանթելով մեջքին, դիմեց դեպի Շերիֆ աղայի խրճիթը:

Շերիֆը մտել էր տանտունը, այնտեղ նրա թոռնիկները փորսող տալով մոտեցել էին իրեն, մեկը մորուքի հետ էր խաղում, երկրորդը՝ նրա ցուպին հենվելով աշխատում էր բարձրանալ դեպի գիրկը, իսկ երրորդը՝ թքոտ և կրծած մի խնձոր պարզում էր իր ծերունի պապին:

Կանայք՝ երեսները կիսովին ծածկած, կերակուրի պուտուկները իջեցնում էին թոնիրը, իսկ տանտիկինը մի կողմում նստած, աշխատում էր թոռան կտրտած վերարկուն կարկատել:

Հարկահանը կոպտությամբ հրեց դուռը և դաժան դեմքով ներս մտավ. կանայք փախան թոնիրի կողքից. Շերիֆը շրջացրեց իր թոռներին ուղղված ժպտող դեմքը և զարմացած մտնողի շարժվածքներին էր նայում:

Հարկահանի ետևից ներս մտան նաև սուվարիները, ձեռքերը սրերի վրա դրած:

— Ծերունի,— ուղղակի դիմեց դեպի Շերիֆը հարկահանը և կանգ առավ նրա առջև,— քո անասնական տուրքերիցդ տալիք է մնացել 167 ղուրուշ, որը գումարելով իմ և սուվարիների ճանապարհածախսի հետ, անում է 200 ղուրուշ. վճարիր ինձ այդ գումարը:

Շերիֆն ապշությունից նախ ոչինչ չխոսեց, հետո գունաթափվեց, դողդոջուն ձեռքով ալյուրի տոպրակին հենվելով բարձրացավ, մի շեշտակի հայացքով նայեց իր դեմը հոխորտությամբ կանգնած հարկահանին և ասեց.

— Ես ոչինչ չունեմ տալու ձեզ. հեռացե՛ք այստեղից:

Հարկահանը, որ կարծես սպասում էր այդ դիմադրության, աչքերն ոլորեց և գոռաց.

— Դու հանդգնո՞ւմ ես պարտքերդ չտալ:

— Ես հանդգնում եմ քեզ հայտնելու, որ այժմ իմ տավարներից մնացել են 4 կով, 2 այծ և 20 ոչխար... այդ բոլորի համար, հանդգնում եմ հայտնելու,— հարեց նա հեգնելով,— որ ես վճարեցի քեզ 100 ղուրուշ փող, այսինքն՝ որոշյալ ղամջուրից 9 ղուրուշ էլ ավելի... դու ինձ մոտ ունիս մի քոչան 100 ղուրուշի... ներո՞ւմ եք իմ հանդգնությանը:

Հարկահանը կատաղում էր, նա մի քայլ ևս արեց դեպի ծերունին և գոռաց:

— Ծերունի, շատախոս, ասում եմ քեզ, որ 167 ղուրուշ էլ պարտ ես ինձ, վճարիր քանի դեռ չեմ բարկացել:

— Բարկանալը արդեն բարկացել ես,— ասեց Շերիֆը հանդարտությամբ, որը հատուկ է միայն նրանց, որոնք գիտեն, թե դիմացի հոխորտացողը իրեն չէ կարող վնասել,— բարկանալը արդեն բարկացել ես,— շարունակեց նա,— միայն հայտնիր ինձ, թե ինչ հաշվից ես գոյացրել նորից 167 ղուրուշը:

— Ինչ հաշվի՞ց,— բացականչեց հարկահանը,— ղամջուրի հաշվից, շատախոս մոլլա, ինձ էլ չես կարող Կուրանից անգիր արած խոսքերովդ վախեցնել... դու այնտեղ ունես 10 կով, 50 ոչխար և այծ, 3 ձի, 4 գոմեշ և ավելի քան 6 եզ...

— Սպասիր,— ընդհատեց Շերիֆը,— թույլ տուր ինձ խոսել, առայժմ մի բարկանա, իսկ հետո, եթե կուզես, ծախիր անասուններս ու ուզածդ առ...

— Եվ կծախեմ,— գոռաց հարկահանը,— կծախեմ անխնա. Շերիֆ աղա ես, ինչ ես, քեզ նման շատախոս մոլլաներ շատ ենք հանդիպել... ասա ինձ տաք կաթ տան, շատ...— հարեց նա կամենալով այդ մանևրով վախեցնել ծերունուն:

Ասեց, ավելի ևս կնճռեց դեմքը և նստեց այլուրի տոպրակի վրա:

— Կաթ տվեք էֆենդուն,— դիմեց ծերունին կանանց, հետո հանդարտությամբ կռթնեց փայտին և ասեց.

— Լսիր, Իզեդդին էֆենդի,— մեզնից այժմ ոչ ոք անգիտակ չէ, որ ղամջուրի տուրքը 3,5 ղուրուշ է գլխից:

Հարկահանը ցատկեց նստած տեղից, նա երբեք չէր կարող երևակայել, որ մի գյուղացի հանդգնի ղամջուրի գինը գիտենալ և, մանավանդ, արտասանել իր առջև:

— Ինչպե՞ս,— գոռաց նա,— 3,5 ղուրո՞ւշ:

— Այո,— շարունակեց ծերունին,— ոչ ոք նաև անգիտակ չէ, որ օրենքով չեն վճարում տուրք սատկած անասունների, ինչպես և մեռած մարդու համար... բացի դրանից, չեն վճարում տուրք եզան, գոմեշի ու ձիու համար, որովհետև սրանք երկիրը մշակողներ լինելով, ազատ են ամեն տուրքից... այժմ, էֆենդի, երբ օրենքը կա, ես զարմանում եմ, թե ի՞նչ ուժով դուք բոլորդ կամենում եք ղամջուրի 3,5 ղուրուշը 10 ղուրուշի դարձնել, սատկածները կենդանացնել և երկիր մշակողները ղամջուրի ենթարկել... համեցեք, կաթը խմեք:

Այդ միջոցին ծերունու մեծ թոռը ներկայացնում էր հարկահանին հողե թասի մեջ լցրած տաք կաթ:

Հարկահանը ետ մղեց ամանը, շվարել էր և կարծում էր, թե երազումն է:

— Ինչպես,— մռմռաց նա,— ի՞նչ ուժով... օրենքի ուժով, օրենքի:

— Օրենքի ձայնը մեզ էլ է հասել:

Հարկահանը ցատկեց տեղից, հեռացավ մի քայլ և գոչեց.

— Մենք, մենք գիտենք օրենքը գործադրել... օրենքի ձայն. սուվարիներ, դարձավ նա զինվորներին,— կտրեցեք այդ ձայնը... դուր չէ գալիս ինձ:

Սուվարիները առաջացան:

— Այդպե՞ս,— ժպտեց գունաթափ ծերունին,— օրենքի ձայնը ձեզ դուր չի՞ գալիս... ես իմը ասեցի,— հարեց նա,— ահա ես, բռնեք ինձ, ինչ որ կուզեք, արեք, ահա տունս և տավարներս, ծախեցեք, եթե օրենքը թույլ է տալիս:

Հարկահանը հանկարծ սթափվեց ծերունու այդ վճռական խոսքերից, վախեցավ, որովհետև իսկույն մտածեց իր բռնելիք ընթացքի հետևանքը:

Ուստի մի շեշտակի հայացք ձգեց ծերունու վրա, քայլեց դեպի դուռը և ասաց.

— Կտեսնվենք քեզ հետ, ծերունի:

— Ես միշտ գյուղումն եմ,— ասեց ծերունին:

— Գնանք, զինվորներ,— դարձավ հարկահանը սուվարիներին,— մենք դրա հետ հաշիվը կվերջացնենք երեկոյան, երբ նախիրը գյուղումը կլինի:

Ասեց ու շտապեց դուրս գալու խրճիթից:

Դռան մոտ դեմ առ դեմ եկավ ջելեբին, որը նայեց նրան հետաքրքրությամբ և հարցրեց.

— Հը՞, ստացա՞ր... բայց այդ ինչ գունաթափվել ես:

— Շատ կծանն է,— մռմռաց հարկահանը քայլելով,— երեկոյան կտեսնենք:

— Երեկոյան էլ մութը կլինի, և դու այլևս չես կարող ոչինչ տեսնել այս խավար խրճիթի շուրջը... խորհուրդ եմ տալիս փախչել խավարից:

Հարկահանը չպատասխանեց. մտածում էր:

5

Բայց ջելեբն էլ պակաս չէր մտածում. նա մտածում էր, թե կարող է փոթորիկ բարձրանալ և ոչնչացնել իր ժողոված տավարները, խլելով իր ձեռքից:

Այդ միտքը նրան զբաղեցրեց ամբողջ օրը. պետք էր, նոր առևտուր սկսելուց առաջ, անպատճառ ապահովացնել իր պատրաստի գնված ապրանքը:

Մեկ մտածում էր թողնել հարկահանին, ձի հեծնել, տավարներն առաջն առնել և ուղղակի քաղաք իջնել վերադառնալ, բայց վախենում էր, թե հարկահանին կբարկացներ. մեկ էլ մտածում էր տավարները դնել Քոփալ գյուղի քուրդ Հյուսեյն աղայի պատասխանատվության ներքո: Ոչ, կարող է պատահել, որ փոթորիկը նրա տունն էլ մտներ... հանկարծ կանգ առավ մտածելուց և ծիծաղեց:

— Ինչե՞ր եմ մտածում,— գոչեց նա,— փոթորի՞կ... ինչքան վախկոտն եմ եղել. մեր երկիր և փոթորի՞կ... Դա մինչև իսկ երազում չէր կարելի տեսնել... Այն գյուղացին ու հիմար ծերունին վախեցրին ինձ... ինձ ի՞նչ. ես խո չեմ ստիպողը, որ ծախեն. ես մի կողմնակի մարդ եմ, տավար են

առաջարկում ինձ առնելու, ես էլ իբր վաճառական, իհարկե, միշտ իմ օգուտս եմ փնտրում և ուզածս գինը տալիս եմ. կտան՝ կառնեմ, չեն տա, խո ես չեմ զոռով գնողը...

Այդպես ինքն իրան խոսելով նա ճաշից հետո գյուղից դուրս եկել, գետն ի վեր քայլում էր. օդը սկսել էր ավելի խոնավանալ, անձրևը դեռ կաթկաթում էր, փչում էր մի սառը քամի, իսկ երկինքը սև ամպերով հետզհետե մթնանում էր: Դաշտվորները սկսում էին գյուղ վերադառնալ, հեռվում, մի սարի կրծքի վրա պարզ երևում էր արածող նախիրը և չոբանը, որը մի ժայռի վրա ցից կանգնած, դիտում էր շրջակայքը. իրանից բավական շատ քայլ հեռու երեք անձինք կռացած գետի վրա լվանում էին ինչ-որ շորեր:

Մուստաֆա աղան դեռ նրանց չէր տեսել, թեև ուղիղ դեպի նրանց էր գնում:

— Այո,— շարունակեց նա մտածելով,— գժություն է մտածել, թե այս գյուղացիք կարող են ինձ կամ հենց նույնիսկ հարկահանին վնաս տալ...— օրենքի ձայն,— ասում էր գյուղացի ծերունին.— հը՛մ, գյուղերը բավական հեռու են, և դրա ձայնը մինչև այդտեղերը հասնելը խեղդվում է բազմաթիվ պաշտոնյաների մթնոլորտի մեջ... ի՞նչ պիտի անե ծերունին. ինձ ոչինչ չէ կարող անել. ես մի կողմնակի թեջիր /Այդ բառն արաբերեն է և նույնն է ինչ որ «ջելեբ» բառը/ եմ, քիչ գին եմ տալիս, թող չծախեն, ե՞ս եմ զոռողը նրանց, որ ծախեն, 100 ղուրուշանոց բանին 10 ղուրուշ եմ տալիս. ախպեր, չեք ուզում, մի ծախեք, ես 10 ղուրուշից ավելի չունեմ մի 100 ղուրուշանոց անասունի համար... մնաց հարկահանը. նրան էլ ոչինչ չեն կարող անել. նա էլ հիմար չէ, գիտե, թե ինչ է գրում քոչանների մեջ. կարդացո՞ղն ով է. 100 է ստանում, գրում է այն, ինչքան որ օրենքով պահանջ ունի. քոչանի մեջ 20 է գրած՝ 50 է առնում. ապա, գնա — Ա՛... գոչեց ջելեբը ժպիտը դեմքին դեպի նրանց առաջանալով,— այդ դո՞ւք եք, չավուշներ, ի՞նչ եք անում այստեղ այս ցուրտ ժամանակ:

Զինվորները պատկառանքով ոտքի ելան, բայց նրանցից մեկը, որ իր կյանքում շատ ջելեբներ և նույնիսկ բեղեր էր խաղացրել մատի վրա և դրանով բավական լրբացել էր, ծիծաղեց և ասեց համարձակությամբ:

— Շոր ենք լվանում, Մուստաֆա աղա, մոռացանք մեր կանանց էլ հետներս բերելու, իսկ այստեղի կանայք էլ դեռ չեն ծանոթացել մեզ հետ...

— Հա՛ա,— ծիծաղեց ջելեբը,— այդ լավ բան է, թե զինվոր և թե տանտիկին... աֆֆերիմ, եղբայրներ, զինվորը ձեզ պես պիտի լինի, կնոջ պետք պիտի չունենա:

— Աֆ է դարսըն /Կներես:/, Մուստաֆա աղա,— ծիծաղեց նորից զինվորը,— որ կոչվում էր Շեֆքի չավուշ,— ես կարծում եմ, որ զինվորն էլ մարդ է և նրան էլ կնիկ է պետք:

— Իհարկե, իհարկե, չավուշ, իմ ասածս այդ չէր... բայց ինչ որ է, էգուց, երբ գործ սկսենք, հույս ունեմ, որ ձեր շորերը այլևս դուք չեք լվանա... լվացողներ շատ կլինեն... սիրուններ շատ կան, հա՛ա:

Բոլորն էլ ծիծաղեցին. լկտի խոսակցությունները մահմեդականին միշտ հաճույք են պատճառում, միշտ նրա խոսակցությունն է և նրանց մեջ է գտնում ամեն քեֆ:

— Բայց գիտե՞ք,— ավելացրեց ջելեբը հոգացողությամբ, օդը խոնավ է, և կարող եք մրսել, հիվանդանալ, խորհուրդ եմ տալիս ձեզ շատ չմնալ այստեղ:

— Վերջացրինք,— ասեց Շեֆքի չավուշը,— ես գոնե վերջացրի գուլպաներս լվանալը, մնացել է չորացնել:

— Տար գյուղում մի թոնիրի վրա չորացրու:

— Լավ ասեցիր,— ժպտաց չավուշը:

— Էհ, ուրեմն ո՞վ է գալիս հետս,— ասեց ջելեբը դառնալով,— ես վերադառնում եմ գյուղ, գնանք միասին:

— Ես դեռ ոտներիս լվանալը չվերջացրի:

Ջելեբը ուրախացավ և սրտատրոփ սպասեց մյուսի մերժմանն էլ. նա կամենում էր անպատճառ Շեֆքի չավուշի հետ մենակ մնալ, բայց այնպես, որ կարծիք չտա, թե ինքը բուռն փափագ ուներ նրա հետ մենակ մնալու:

— Ես էլ կմնամ,— ասեց մյուսը,— դեռ երկու օղակ մնաց կարելու:

— Ուրեմն դու արի գնանք,— դարձավ ջելեբը Շեֆքիին:

— Իսկ սրա՞նք:

— Դրանք հետո կգան, խո երեխա չեն, որ մոլորվեն:

Եվ մի զվարթ ծիծաղ արձակեց:

Զինվորներն էլ ծիծաղեցին. Շեֆքի չավուշը հագավ կոշիկները, ձեռքն առավ թաց գուլպան և ասեց.

— Գնանք:

Ջելեբը ու զինվորը սկսեցին դեպի գյուղը բարձրանալ:

— Շեֆքի չավուշ,— հարցրեց ջելեբը զինվորին,— մի՞թե դուք տարին տասներկու ամիս շարունակ ճանապարհորդում եք:

— Իհարկե,— պատասխանեց չավուշը,— միայն ձմեռն է, որ փոքր-ինչ հանգստանում ենք, այն էլ ինչ հանգստություն. քաղցած կզկռտանք, եթե չհամաձայնվենք այն ցրտաշունչ եղանակներին պոստի հետ ընկերանալ քաղաքից քաղաք:

— Եվ մի՞թե ձեզ այդքան քիչ են վճարում:

— Վճա՞ր,— ծիծաղեց չավուշը,— մի՞թե դու չգիտես, որ մեզ շատ քիչ և կամ բոլորովին չեն վճարում. ինչ որ էլ ձեռք ենք բերում, այն է, ձեզ պես աղաներից ենք ձեռք բերում:

— Իհարկե, նրանց ծառայելով:

— Իհարկե, առանց աշխատեցնելու ո՞վ փող կտա մեզ:

— Ուրե՞մն,— խորամանկ ժպիտով հարցրեց ջելեբը,— ես էլ, որ ուզենամ քեզ մի ոսկի տալ ու աշխատեցնել...

— Մի ոսկի՞,— ընդհատեց չավուշը ոստոստելով,— մի ոսկի՞... աշխարհիս ծայրն էլ կերթամ, եթե կամենաս:

— Ի՞նչ գործ ունեմ մինչև աշխարհի ծայրը,— ծիծաղեց ջելեբը,— շատ-շատ քեզ մինչև քաղաք ուղարկեմ:

— Էրզրո՞ւմ:

— Ո՛չ, Խնուս:

— Հրամայիր, ե՞րբ գնամ, այս րոպեի՞ս:

— Հը՞... ոչ,— շտապեց ասել ջելեբը,— ոչ, այս րոպեիս չի կարելի. գիշերը:

— Գիշե՞րը... այս գիշերները քիչ մութ են:

Ջելեբը կանգ առավ, չավուշի երեսին նայեց և հեգնությամբ ժպտալով ասեց.

— Հը, չլինի, թե Շեֆքի չավուշը վախենում է:

— Ո՞վ, ե՞ս վախենամ,— գոչեց զինվորը հոխորտանոք, ե՞ս, որ մինչև այժմ քանի մարդու գլուխ եմ թռցրել բայց ես նրա համար ասեցի, որ ճանապարհները քիչ վատ են, գիշերն էլ՝ մութ:

— Հիմար ես, չավուշ, այս գիշեր էլ երեկվա նման փառավոր լուսին կլինի. իսկ այստեղից մինչև Էրզրում ճանապարհներն էլ այնքան վատ չեն, թեև ձորեր շատ կան:

— Հենց այդ ձորերը,— կմկմաց չավուշը:

— Է՛ է,— ձեռքը թոթվեց ջելեբը,— ուրեմն քեզ ոչինչ չէ կարելի անել, քեզ, որ ձորերից վախենում ես և առիթը փախցնում ես 2 ոսկի շահելու:

— Երկո՞ւ... ես պատրաստ եմ. ի՞նչ անելու պիտի գնամ:

— Տավարներ պիտի տանես,— ասեց հանկարծ ջելեբը և ուշադրությամբ նայեց զինվորի դեմքին:

Զինվորը բերանը բաց՝ կանգ առավ:

— Տավարնե՞ր,— կմկմաց նա,— կո՞վ, ե՞զ, ոչխա՞ր:

— Այո, կով, եզ և ոչխար:

— Էրզրո՞ւմ պիտի տանեմ:

— Խնուս պիտի տանես:

— Ինչո՞ւ:

— Է՛, բարեկամ, երբ ծառայում են, չեն հետաքրքվում, այլ առնում են վարձը և լռում:

Չավուշը կոտրվեց. նա ծոծրակը քորեց և մտածեց:

— Հը՞,— հարցրեց ջելեբը,— էլ չե՞նք խաղում:

— Խաղում եմ, խաղում,— բացականչեց զինվորը, միայն թե կանխիկով...

— Կեսը կանխիկով. այո կամ ոչ:

Եվ ջելեբը մի քանի քայլ առաջ գնաց:

— Համաձայն եմ. տուր ոսկին,— վազեց նրա ետևից զինվորը:

— Ջելեբն ուշադրությամբ զննեց զինվորի դեմքը, հետո լռությամբ մի քանի քայլ առաջ արավ և առանց կանգնելու ասեց.

— Երբ կմթնանա, այսինքն՝ կես-գիշեր կլինի, ես քեզ հետ Քոփալ կգամ, տավարները քեզ կհանձնեմ և ոսկին էլ ձեռդ կդնեմ:

Զինվորը չպատասխանեց:

— Հը՞, ի՞նչ է, համաձայն չե՞ս,— հարցրեց ջելեբը:

— Ո՞վ ասաց չէ,— գոչեց զինվորը,— համաձայն եմ:

— Լավ ուրեմն,— կանգ առավ ջելեբը և ստացավ լուրջ դեմք,— մի բառ պիտի չասես այդ մասին ոչ ոքի:

— Եվ ոչ իսկ էֆենդիի՞ն:

— Եվ ոչ իսկ նրան:

— Եվ ոչ իսկ ընկերների՞ս:

— Մանավանդ նրանց:

— Լավ:

— Կես-գիշերին ձի կհեծնես, կգաս ինձ մոտ, ես կլինեմ գյուղից դուրս գտնվող գմբեթի մոտ և մենք կերթանք Քոփալ:

— Տավարներ շատ կա՞ն:

— 50-60 հատ:

— Վահ... այդչափ շա՞տ... ես մենակ ինչպե՞ս տանեմ:

— Դժվարը մինչև Քովանդուկ գյուղը հասցնելն է, իսկ այնտեղ ես կասեմ, որին պիտի դիմես, որ քեզ ընկերներ տա տավարները քշելու:

— Իսկ մինչև Քովանդո՞ւկ:

— Շատ հեռու չէ. եզները և կովերը կկապենք միմյանց, ոչխարներն առջև կանես և իմ քուրդ ծառայիս հետ կերթաք:

— Քուրդ ծառա՞դ էլ է գալու:

— Այո՛...

Նրանք մոտենում էին գյուղին:

— Այժմ բաժանվիր ինձանից և ուրիշի առջև երբեք չխոսես ինձ այս բանի մասին,— ասեց ջելեբը զինվորին:

— Ապահով կաց:

Զինվորն առաջ անցավ, իսկ ջելեբը նստեց մի քարի վրա և սկսեց սարից դեպի ձորն իջնող նախիրը դիտել, որոնց շուրջը վազում էր իր քրդական կուլաբը՝ /Մի անթև թաղիքե վերարկու:/ վրան առած քուրդ նախրապանը:

Արևը մայր էր մտնում. դաշտավորներն ետ էին դառնում իրանց լուծերով. քուրդ և հայ կանայք թաց շորերի կապոցներ գլխների վրա դրած՝ գետից դեպի գյուղն էին ելնում, իսկ գյուղից լսվում էր հայոց եկեղեցու կոչնակի մելոդիական ձայնը:

6

Հարկահանը, որը սպասում էր նախրի գյուղ մտնելուն, երբ մթնացավ, առավ թևի տակ իր քոչանների տետրակը, կանչեց սուվարիներին և պատրաստվեց գործ սկսելու:

— Ո՞ւր է Մուստաֆա աղան,— հարցրեց նա սուվարիներից մեկին դառնալով:

Այդ միջոցին ջելեբը երևաց. նա մի ինչ-որ մեծ փաթտոցավոր ֆեսով հայի հետ խոսելով մոտենում էր:

— Այս ո՞ւր մնացիր, Մուստաֆա աղա,— գոչեց հարկահանը հեռվից,— ուշացանք, արի, որ այս գիշեր այս գյուղը վերջացնենք:

Ջելեբի հետ խոսող հայը, լսելով նրա ձայնը, դադարեց խոսելուց, վախեցած կանգ առավ, և երբ ջելեբը քայլում էր դեպի հարկահանը, հայը զգուշավոր քայլերով նրա ետևից գնաց և հինգ քայլ հեռու կանգ առնելով մի խորին խոնարհություն արավ հարկահանին:

— Չսկսե՞նք,— հարցրեց հարկահանը ջելեբին:

— Սկսենք,— ժպտաց ջելեբը,— ահա, սա հայերի աղ-սախկալներից է, իմ բարեկամ Սերգո քեհյան,— հարեց նա հեռու կանգնած վախեցած դեմքով հային ցույց տալով:

Հարկահանը՝ բարձրից նայելով նրա վրա, ընդունեց պաշտոնական մի խիստ կերպարանք, ոտքից գլուխ չափեց նրան և ասեց դառնալով ջելեբին.

— Սրանի՞ց սկսենք:

— Ես, էֆենդըմ,— մի քայլ մոտենալով կմկմաց հայը, ես անցյալ անգամ վճարեցի տուրքը:

— Մենք այդ կտեսնենք,— ասեց խստությամբ հարկահանը և դառնալով ջելեբին, ավելացրեց,— գնանք առաջ այդ գյավուրների գործը վերջացնենք:

— Հենց ես էլ այդ էի ուզում ասել,— վրա բերեց ջելեբը,— ուրեմն գնանք... դե, Սերգո քեհյա,— դարձավ նա հային,— վազիր օդադ պատրաստիր մեզ համար, սուրճ էլ խո կունենաս... իհարկե չես մոռանա մի գառ էլ մորթել տաս, քեզ տեսնեմ, երեսս պարզ հանես էֆենդիի մոտ, ես քեզ շատ եմ գովել, որ հյուրասեր ու լավ մարդ ես... գնա, մենք էլ գալիս ենք:

Սերգո քեհյան նորից գլուխ տվավ և վազնիվազ մտավ գյուղի փողոցները:

Ջելեբը, որ մի չարանենգ ժպիտով նայում էր նրա ետևից, դարձավ հարկահանին.

— Որտեղի՞ց գտար այդ գյավուրին,— հարցրեց նրան հարկահանը:

— Ինչպե՞ս թե որտեղից գտար,— ծիծաղեց ջելեբը,— Խնուսում էլ մարդ կա՞, որ ինձ չճանաչի... Սերգոն լավ մարդ է, խեղճ մարդ է. բոլոր հայերն էլ հենց խեղճ, իրանց գործին նայող, հնազանդ, հյուրասեր մարդիկ են, վալլահ, մեր մյուսուլմաններից տասը սրանց մեկի չափ բարություն չունի... այ, հիմա կերթանք ու կտեսնես, թե այդ հայը ինչպես պատրաստություններ կտեսնի մեզ համար ու ինչպես մեզ կպատվի:

— Հա, լավ ասեցիր,— գոչեց հարկահանը,— այսօրվա այդ շատախոս քուրդ մոլլայի ճաշից ոչինչ չհասկացա... գիտե՞ս, քիչ մնաց այդ հիմար մոլլայի մորուքը փետեի...

— Ինչո՞ւ,— հարցրեց վախեցած ջելեբը:

— Այ, գնանք ու քայլելով պատմեմ... արյունս եռ եկավ ու էլ չկարողացա դիմանալ, վեր կացա, որ ղալմաղալ գցեմ, բայց էլի «նահլաթ շեյթանին» ասեցի ու համբերեցի... քայլենք ու պատմեմ, լսի՛ր:

Նրանք սկսեցին դեպի հայոց եկեղեցին քայլել: Հայոց այդ խղճուկ եկեղեցին, որ միայն իր բարձրությամբ և վրայի փայտյա եռոտանի զանգակատնով (կոչնակատեղի) էր զանազանվում մյուս խրճիթներից, գտնվում էր գյուղի մեջտեղը և շրջապատված էր մանր ու մեծ կլոր տանիքներ ունեցող խուղերով, որոնց միջից թողված էին մի քանի նեղ անցքեր իբր փողոց:

Հարկահանը և ջելեբը, որոնք գտնվում էին գյուղի աղբյուրի մոտ, մտան այդ փողոցներից մեկը և ծանր քայլերով անցնում էին խրճիթների առջևից. խրճիթների դռներից երևում էին երբեմն վախկոտ գլուխներ, իսկ եթե պատահում, էր, որ նրանց առջև կանգնած էին լինում մարդիկ, ջելեբին և հարկահանին տեսնելուն պես, ավելի ևս կպչելով պատին, ճանապարհ էին տալիս և մի խոր գլուխ իջեցնում իրանց վրա անգամ չնայող պաշտոնյաներին:

Հարկահանից և ջելեբից երկու քայլ հեռավորությամբ քայլում էին սուվարիները, ձեռքերը սրերի վրա դրած և անպատկառ ու հետաքրքիր հայացքներ գցելով բաց դռներից ներս ու այս-այնտեղ երևացող կանանց ու աղջիկների վրա:

Արդեն մթնացել էր, բայց մի պարզ լուսնկա գիշեր էր:

— Հա... դու առաջ այն ասա,— սկսեց հարկահանը ջելեբին դառնալով,— որտե՞ղ ճաշեցիր և մինչև այժմ ո՞ւր էիր:

— Ճաշեցի այս հայի մոտ, իսկ մինչև այժմ ման էի գալիս:

— Լավ ճաշ տվա՞վ քեզ այդ գյավուրը:

— Թագավորի ճաշ,— ծիծաղեց ջելեբը հավ մորթեց, փլավ շինեց, ձվածեղ պատրաստեց, իսկ նրա սիրուն հարսն էլ մի ամաև այնպես սերախառն կաթ դրեց առջևս, որ քիչ մնաց մատներս էլ հետը ուտեի...

— Լավ բախտավոր ես եղել, ախպեր... իսկ ե՞ս... այ, լսիր պատմեմ, թե այդ շուն մոլլան ինչպես պատվեց ինձ, որ քիչ մնաց տունը տակնուվրա անեի. դեռ այն չեմ ասում, որ ձիուս առջևն էլ սկի գարի չէին լցրել: Բայց սպասիր կարգով սկսեմ: Հա... գալիս եմ տուն մտնում, տեսնում այդ քավթառը էլի հավաքել է իր մոտ լակոտներին, մեջքը ալյուրի տոպրակին է տվել ու նրանցից մեկի բերանը մածուն է կոխում, իսկ մյուսը, որ երեսը ու շորերը մածնաթաթախ էր արել, թավալելով հողերի մեջ իրան զվարթ ծիծաղներ է արձակել տալիս... հայվանը դեռ համարձակվեց շարունակել իր ծիծաղը, երբ ես ներս մտա. հազիվ շարժվեց տեղիցը ու... անամոթ անասունը... ներողություն է խնդրում, թե «Ծեր եմ, չեմ կարողանում հեշտությամբ ոտքի ելնել...»: Ես, իհարկե, խիստ կերպարանք ընդունեցի ու հրամայեցի ինձ ճաշ տալ: «Ճաշ բերեք էֆենդիին»,— գոռաց նա ամեն կողմ գործով զբաղված հարսներին, որոնք բոբիկ սրունքներով վազվզում էին խրճիթի մեջ...

պիտի ասել, որ դրանց մեջ մեկը կար, որ խիստ գրավեց ինձ. շան աղջիկը այնպես սիրունն է, տասը հատ մեր քաղաքցի կնիկ արժե, վառվռուն աչքեր, սև, սիրուն երկար մազեր, վայելուչ հասակ, լիքը կուրծք, մի խոսքով, մի լեռնային հյուրի-փերի... որ գա իմ հարեմը, իմ երկու կնիկներս դուրս կանեմ նրա խաթրի համար...

— Պատմությունդ կիսատ թողեցիր,— ծիծաղեց ջելեբը:

— Հա՛, իրավ,— ծիծաղեց նաև հարկահանը,— այդ շան աղջիկը խելքս գլխիցս տարավ... էն էի ասում.

«Ճաշ բերեք էֆենդիին»,— գոռաց ախմախ մոլլան... Իսկույն դրին սինին, մի քանի հատ սև հաց շարեցին վրան, մի և ուրիշ կուճ մածուն, մի թաս կաթ, մի կտոր ժաժիկ և ուրիշ ոչինչ: Զարմացա առաջ. «Այս ի՞նչ է,— գոռացի ես, արյունս եռ եկավ,— ուրիշ ոչինչ չունի՞ք ուտելու»: «Ներիր, էֆենդի, պատասխանեց կեղծավորությամբ մոլլան, — երեկ վերջացավ միսը, այդ կերեք, մերոնք մի քիչ թան կամ վռոշ եփած կլինեն»: Բարկացա, դեն հրեցի սինին ու գոռացի. «Ես այս չեմ ուտի և ոչ էլ՝ ձեր թանը կամ հոտած վռոշը. ինձ միս տվեք, շո՛ւտ»:

— Միս չունենք,— ասեց մոլլան:

— Չունի՞ք,— գոռացի ես,— մորթեցեք մի գառ ու խորոված պատրաստեք:

— Գառներ քիչ ունենք ու եղածն էլ նախիրումն է:

— Ինչպե՞ս,— գոռացի ես կատաղած,— ինձ մածունո՞վ եք ուզում կերակրել, շուտ, մի հավ մորթեք:

— Մեր հավերը բոլորը թխսկան հավեր են:

— Բարկությունս եկավ, ցատկեցի տեղիցս և ուզեցի սուվարիներին կանչել, որոնք դրսում մի աման մածունի վրա ընկած՝ անհագությամբ ուտում էին:

— Ուրեմն փլավ եփեցեք,— գոռացի ես վերջին անգամ և լեզուս կծեցի, որ չբարկանամ, բայց ինչ կասես, եթե ասեմ, որ այդ անօրենը համարձակվեց հանդարտությամբ ասել, որ բրինձ էլ չունեն և որովհետև դեռ ցորենը չեն սկսել աղալ՝ ձավար ու կորկոտ էլ չէ մնացել: Արյունս գլխիս խփեց, վեր թռա տեղիցս, սինին մի կողմ շպրտեցի, սառնասրտությամբ ինձ վրա նայող մոլլային վազեցի և գոռացի.

— Անհավատ...

— Ես անհավատ չեմ,— ասեց նա հանդարտությամբ,— ես էլ քեզ նման մյուսուլման եմ:

— Անօրեն,— գոռացի ես,— այդպե՞ս են ընդունում թագավորի հարկահանին, ապստամբ...

— Ես ապստամբ չեմ,— ասում է նա,— ես թագավորի հավատարիմ ծառան եմ, բայց որ ունեցածս այսքան է միայն, ձեռքիցս էլ ի՞նչ կգա, ես էլ եմ մածուն և կաթ ուտում, որովհետև ուրիշ բան չունեմ ուտելու: «Նահլաթ շեյթանին»,— ասեցի ես լեզուս նորից կծելով, որպեսզի չկատաղեմ, որովհետև այդ հիմար մոլլայի հանդարտությունը կատաղեցնում էր ինձ: Ինչ արած, մի կերպով նստեցի մածունը կերա, հետո թան տվին, մի լավ ձվածեղ էլ բերին վրան լիքը եղ, մի քիչ էլ այլուրից մեղրով փոխինդ շինեցին, հետո իբր մաղա կարագ ու մեղր բերին, և ես ստիպված այսպես մի անպիտան ճաշ արի, որովհետև չուզեցի բարկանալ ու գերեզմանին մոտ եղող մի ծերունու սիրտը կոտրել, նրա վրա ձեռք բարձրացնել...

— Լավ համբերություն ես ունեցել, ախպեր, աֆֆերիմ քեզ,— ասեց ջելեբը,— ես լինեի տունը տակնուվրա կանեի:

— Ես էլ պակաս պատվապահանջ չեմ,— պարծեցավ հարկահանը,— բայց ի՞նչ արած, առաջին, որ քաղցած էի, և երկրորդ, որ խեղճս եկավ այդ ծերունին, մանավանդ, նրա սիրուն հարսը, որը անշուշտ վախից կմեռներ, եթե ես ղալմաղալ սարքեի... չէ, անպատճառ այդ կնոջ պիտի տիրապետեմ ես, խելքս գլխիցս տարավ, չեմ իմանում, ախպեր, հյուրի-փերի է կատարյալ... շան աղջիկը... մարդ զարմանում է, թե ինչպես սրանց պես հայվանները այդպես հյուրի-փերիներ են ունենում...

— Ասում ես հարս է, չէ՞,— խոսեց ջելեբը,— ուրեմն մարդ էլ ունի:

— Իհարկե, կես ժամ առաջ տեսա մարդուն, մի այլանդակ մարդ, երկար, առողջ, կարմիր թշերով, մեծ բուի աչքեր... մարդ ապշում է, թե ինչպե՞ս են հանդգնում այդպիսի չնչին արարածները այդպես հյուրի-փերի կանանց տերը լինել...

— Լավ, լավ,— ծիծաղեց ջելեբը,— շատ մի տաքանա, դեռ նոր ես, եթե այս կողմերը պտտես, հարյուր հատ այդպես հյուրի-փերիներ կտեսնես, մեկը մյուսից սիրուն... այ, հիմա կտեսնես գյավուրի հարսն էլ, որը պակաս չէ քո քուրդի կճեից... հասանք, այ տե՛ս, թե ինչպես մեր հյուրընկալը դռան մոտ կանգնած՝ մեզ է սպասում... ահա և դիմավորում է մեզ:

Եվ իրավ, մի մեծ խրճիթի մոտից դեպի նրանց սկսեց գալ պատկառանոք Սերգո քեհյան:

Հարկահանը ընդունեց պաշտոնական վեհ կերպարանք և քայլվածք ու շատ դանդաղ կերպով գլուխը շարժեց ի պատասխան մոտեցող հայի խոնարհ ողջույնին:

— Հը, Սերգո,— ասեց ծիծաղելով ջելեբը,— օդան պատրա՞ստ է:

— Հրամանք ես, աղա, ձեր ծառան աղաների օդան պատրաստեց, համեցեք աչքիս, գլխիս վրա, տունը ձերն է:

— Շատ ապրիս,— ասեց քիչ դեմքը զվարթացնելով հարկահանը,— իսկ լավ կերակուրներ ունի՞ս:

— Տունը ձերն է,— խոնարհ ողջույն տվավ քեհյան,— ինչ որ հրամայեք, իսկույն պատրաստ կլինի:

Եվ մի կողմ քաշվելով, թողեց հարկահանին և ջելեբին, որոնք ներս մտան խրճիթը:

7

Սենյակը մտնելու ժամանակ, ջելեբ Մուստաֆան թողեց, որ հարկահանն առաջ անցնի, իսկ ինքն ետ մնաց, մոտեցավ տանտիրոջ, քաշեց նրան մի կողմ և ականջին մի բան փսփսաց: Տանտիրոջ դեմքի վրա երևաց մի ժպիտ, և նա գլխով հավանության նշան տվավ ու կամենում էր հեռանալ:

— Լավը լինի այ...— ասեց բարձր ձայնով ջելեբը:

— Շատ լավը չէ, բայց կարելի է խմել,— պատասխանեց քեհյան:

Այնուհետև, ջելեբը մտավ սենյակը, ուր արդեն հարկահանը նստել էր բարձրում փռված օթոցի վրա և պապիրոս էր շինում:

— Գիտե՞ս, քաղցած եմ,— դիմեց նա ջելեբին:

— Ես էլ եմ քաղցած, ես պատվիրեցի, որ մի փոքրիկ նախաճաշ տան, մինչև որ կերակուրներն եփվեն:

— Նախաճա՞շ, էդ խո շատ կերկարի. նախաճաշից հետո ճաշ, և մենք հազիվ մինչև կես-գիշերին պրծնենք ուտելուց. ես չեմ սիրում շտապով ուտել. իսկ ե՞րբ կսկսենք գործը:

— Մեկ կողմից կուտենք, մյուս կողմից գործ կտեսնենք,— ժպտաց ջելեբը,— ես կհրամայեմ, որ կանչեն աղսախկալ հայերին ու քեշիշին, դու նրանց կներկայացնես հաշիվդ, հետո կհայտնես, որ սուվարիներն այդ ցանկով պիտի փող հավաքեն և չունեցողի տավարներն ինձ ներկայացնեն, և ահա ամեն ինչ կվերջանա:

— Այդպիսով գործը շատ կերկարի:

— Ինչու, քանի՞ տուն հայ կա այստեղ, որ քեզ տալիք ունեն:

— 20 տուն հայ են, բոլորն էլ տալիք են... չէ, այդ կերպով ես վնաս կտեսնեմ. պիտի կանչել մեկ-մեկ բոլորին և պահանջել, իսկ եթե չունենան, այս գիշեր և եթ ծախել ու առնել նրանց տավարները:

Ջելեբը մի որպե չպատասխանեց, լռությամբ ծխեց շինած պապիրոսը, շփեց մազերը և ծանրությամբ ասեց.

— Գիտես ինչ կա, եղբայր, ես այս գիշեր իսկի տրամադիր չեմ տավար գնելու, մինչև որ ունեցածներս փոխադրել չտամ Խնուս... տանելը դժվար է:

— Ինչ ասեցի՞ր,— տաքացավ հարկահանը,— տրամադիր չես, չլինի՞ թե այլևս փող չունես:

— Փո՞ղ,— ժպտաց ջելեբը,— դեռ տասը գյուղի բոլոր տավարները գնելու չափ փող ունեմ. սակայն, չեմ կամենում գնած տավարներից նախիր կազմել. ես այս գիշեր մտադիր եմ Քոփալ գյուղից տավարները Խնուս ուղարկել, իսկ էգուց որքան տավար ուզես կգնեմ:

— Ո՞վ պիտի տանե տավարները:

— Ես մարդիկ գտել եմ:

Այդ միջոցին ներս է մտնում տանուտեր Սերգո քեհյան մի սինիով, որի մեջ դրված կար երկու հատ Վանի եփած տառեխներ, հաց, մի շիշ օղի և երկու գավաթներ:

Հարկահանը տեսնելով շիշն ու ձուկը, զվարթ կերպարանք ստացավ և գոչեց...

— Ես իմ աստվածը, Մուստաֆա աղա, այս գյավուրը լավ մարդ է եղել: Ապրիս, Սերգո քեհյա, լավ ես մտածել այդ տառեխները բերելով. ի փոխարեն դրանց, քո տուրքերից մի մասը կբախշեմ քեզ:

— Բայց...— կմկմաց տանուտերը սինին նրանց առջև դնելով,— ես արդեն վճարել եմ տուրքերս:

— Հա՞,— ժպտաց հարկահանը,— իմ միտքս չէ, սակայն եթե վճարել ես, իհարկե, քոչան կունենաս:

— Քոչա՞նը...— գունաթափվեց տանուտերը,— քոչանը փոքր որդիս... մի՞թե անպատճառ այդ թղթի կտորը պետք է:

Ջելեբը հասկացավ, թե խեղճ քեհյայի քոչանի գլխին ինչ եկած պիտի լիներ, ծիծաղեց և ասեց ծաղրածությամբ.

— Խեղճ Սերգո, բանդ բուրդ է, եթե քոչանդ կորցրել ես. որովհետև իմ բարեկամ Իզեդդին էֆենդին շատ մոռացկոտ մարդ է, երեկվա ասածն այսօր մոռանում է:

— Էհ, այո, սիրելի քեհյա,— ավելացրեց հարկահանը կլանելով մի գավաթ օղի,— իմ խեղճ միտքս շատ սուր չէ. այ, օրինակ, ես մոռացել եմ մինչև իսկ երեկ ինչ եմ կերել... եթե քոչանդ կորցրել ես, շատ վատ բան է եղել, որովհետև ես չեմ հիշում, որ քեզնից փող առած լինեմ... չեմ հիշում...

Սերգո քեհյան կանգնած տեղը դողում էր և մեռելի պես գունաթափվում, և ջելեբը, տեսնելով այդ, շարունակ ծիծաղում էր ու միմյանց վրա դատարկելով օղիի գավաթներ, ասում էր հեգնությամբ.

— Խեղճ քեհյաս, խեղճ... ի՞նչ արած, աստված անիծի բութ մտքերը:

— Բայց ախր...— կմկմաց քեհյան,— ես վկաներ ունեմ, որ անցյալ անգամ տուրքս վճարեցի:

— Էհ, քեհյա, ինչ երեխա-երեխա խոսում ես,— գոչեց հարկահանը,— ե՞րբ է լսվել, որ տուրքերի համար վկայություն ընդունվի, բաս քոչաներն էլ ինչացու են. եթե բանը վկայություններով վերջանա, թագավորի գանձը միշտ դատարկ կմնա, որովհետև որ գյուղացին մյուսի համար կվկայի, թե տուրքերը չէ տվել... գնա, գնա դու առայժմ ընթրիքը շուտ պատրաստիր, հետո կտեսնենք ինչ կանենք...

Սերգո քեհյան երերալով դեպի դուռը դիմեց:

— Հա՛, սպասիր,— կանգնեցրեց նրան հարկահանը և հետո ջելեբին դառնալով հարցրեց,— ի՞նչ ես կարծում, Մուստաֆա աղա, չսկսե՞նք գործը:

— Սկսենք,— ասեց ջելեբը կես բերանով.— նա շատ փափագ չուներ այլևս նոր տավար գնելու:

— Ուրեմն,— դարձավ հարկահանը քեհյային,— մարդիկ ուղարկիր իսկույն տերտերին ու գզիրին և ասա, որ ղամջուրի տուրք հավաքողը եկել է և տուրք է պահանջում... թող մինչև երկու ժամ ամեն մարդ բերե և տա... հասկացա՞ր:

— Հրամանք ես,— թոթովեց քեհյան:

— Դեհ, շուտ արա,— ավելացրեց հարկահանը,— մի մոռանա իմացնելու փող չունեցողներին, որ այստեղ կա մի ջելեբ, մի պատվական մարդ, որ համաձայնում է ձեռնտու գներով անասուններ գնել... գնա...

Քեհյան դուրս գնաց:

— Հը՛մ,— արեց ջելեբը նրա դուրս գնալուց հետո,— ես կցանկանայի այդ գործը վաղվան թողնել:

— Ես չեմ ցանկանում,— նորից տաքացավ հարկահանը,— ես այժմ մի կողմից փող պիտի հավաքեմ, իսկ մյուս կողմից քեֆ պիտի անեմ... լավ օղի է,— հարեց նա մի գավաթ ևս խմելով,— այս անիծյալ չոր ձուկը լավ խմեցնում է... հա, հետո, էֆենդըմ, պիտի սուվարիները վերցնեմ և այն շատախոս քուրդ մոլլայի մորուքը թափահարելու գնամ:

— Ի՞նչ,— գոչեց սարսափած ջելեբը,— էլի այն ըմբոստի մոտ պիտի գնա՞ս. քո քեֆն է, կուզես գնա, բայց ես ոչ կգամ և ոչ էլ նրանից անասուն կգնեմ:

Հարկահանի գլուխը խմած օղիից հետզհետե տաքանում էր:

— Է՛հ,— գոչեց նա,— ես սկի անասուն էլ չեմ թողնի, որ դու գնես, ինադ յուչյուն օլսա /Աջուղի համար լինի/, բոլոր տավարներին մեկ-մեկ պիտի մորթեմ, իրան մորուքը կտրեմ և այն հյուրի-

փերին հետս պիտի տանեմ... այո, այս բոլորը պիտ անեմ, ինադ յուչյուն օլսա, պիտի անեմ... հա, լավ միտս ընկավ, Մուստաֆա,— դարձավ նա հարկահանին բորբոքած աչքերով,— ո՞ւր է, դու ինձ ասում էիր, որ այս գյավուրի աղջի՞կը, թե՞ հարսն էլ շատ սիրուն է...

— Սպասիր, ծիծաղեց ջելեբը,— այդպես ամեն բան իրարու չեն խառնի, դեռ ուտենք, հետո տուրքերը ժողովենք ու վերջում այդպես բաներ մտածենք... հը, օղին սկսում է պրծնել:

— Հրամայեք է՛լ բերեն:

— Բերելը կբերեն,— ասաց ջելեբը, որը նույնպես անհագությամբ խմում էր,— բայց, տես, Իզեդդին, խոսք տուր ինձ, որ քուրդերի հետ այսօր գործ չես ունենալու, թե չէ էլ օղի չեմ բերել տա:

— Հա, լավ, թող քո ասածը լինի, այսօր հայերը մեզ հերիք են. խոմ հայերից էլ չե՞ս վախենում:

— Հա, հա, հա,— ծիծաղեց ջելեբը,— հայերի՞ց վախենալ. նրանցից 500 հազարը, որ հավաքես Էրզրումի դաշտը, հետո հեռվից մի թնդանոթ արձակես օդի մեջ՝ բոլորը վախից կմեռնեն... տո ո՞վ է վախենում հայից, որ ես վախենամ, իմ մեկ գոռալս հերիք է, որ նրանք լեղապատառ լինեն... այ, դու այժմ պիտի տեսնես, թե ինչպես պիտի գան այստեղ բոլորն էլ դողդողալով, գունաթափ ու մեր ոտքերի մոտ դնեն, տուրքը...

— Իսկ եթե փող չունենա՞ն:

— Որքան կուզես տավարները ծախիր, շատ-շատ լաց կլինեն, այն էլ եթե գոռաս, իսկույն արտասուքները կսրբեն. ո՞վ է իրավունք տվել նրանց լալու... հոգիները կհանեմ, հատը 50-60 ղուրուշով, պիտ տեսնես, թե ի՞նչ տավարներ պիտի առնեմ...

— Աֆֆերիմ, Մուստաֆա,— գոռաց հարկահանը,— լեզուդ բացվել է... դեհ, ասա՛, որ այս շիշը լցնեն:

Եվ իրավ, օղիի շիշը դատարկվել էր: Ջելեբը կանչեց տանտիրոջը և հրամայեց շիշը նորոգել, հետո ընթրիք պահանջեց, և երբ քիչ հետո ընթրիքն եկավ, ընթրիքի հետ քեհյան հայտարարեց, որ տերտերը և մի քանի իշխանները եկել, դրսումը սպասում են:

— Տուրքերը բերե՞լ են,— գոչեց հարկահանը:

— Ոչ,— կմկմաց քեհյան,— ասում են, որ փող չունեն:

— Տավար թող ծախեն ինձ,— գոռաց ջելեբը,— հատը 60 ղուրուշով կառնեմ կով և ոչխար, քանի հատ ունեն թող բերեն:

— Լսեցի՞ր,— շարունակեց հարկահանը,— թող առանց տուրքի երեսիս չգան, թե չէ, Աստված վկա, բոլորին մեկ-մեկ սուվարիների ձեռքը կտամ, որ մտրակի տակ կաշին քերթեն... տերտերից սկսած մինչև ետինը...

— Խեղճ են,— ավելացրեց ջելեբը,— ասա՛, որ ճարեն բերեն. ես լավ եմ ճանաչում Իզեդդին էֆենդիին, նա իր ասածը կանի և բոլորիդ էլ ջարդել կտա:

— Աստված վկա, որ կանեմ,— գոռաց հարկահանը ոտքի ելնելով,— քեհյան վախեցած ետ-ետ քաշվեց ու կպավ պատին:

— Հա,— շարունակեց հարկահանը գոռալով,— բոլորիդ էլ, մինչև իսկ քեզ էլ, կաշեհան անել կտամ, շուտ, մինչև երկու ժամ՝ կամ տավարներ և կամ տուրք... դու էլ գնա, և եթե քոչան ունես, քոչանդ

բեր, եթե չունիս՝ տուրք... Ջելեբը ծիծաղում էր. նրան հավասարապես զվարճացնում էին, թե հարկահանի կատաղի շարժվածքները և թե քեհյայի մեռելային կերպարանքն ու դողալը:

Երբ քեհյան դուրս գնաց, ներս բերին մի փոքրիկ գառ խորոված, յուղալից փլավ և ձվածեղ, լավ գոմեշի մածուն, սեր, կարագ և մեղր:

Հարկահանն ու ջելեբը սկսեցին ուտել, չմոռանալով հաճախ օղիով մաքրել կոկորդները:

Հարկահանն արդեն հարբել էր, իսկ ջելեբը դեռ փոքր-ինչ լուրջ էր, սակայն, սկսում էր գինովնալ. նա երերալով ուտում էր փլավը, կեսը թափելով շորերի և գետնի վրա: Նրանց ձեռքերը յուղոտվում էին, ընչացքը և շորերը մածունոտվում, իսկ խորոված գառից նրանք մի-մի մեծ շերտ կտրած, լափում էին գայլերի պես:

Մի բարձր ճրագկալի վրա դրված ձեթե կանթեղը աղոտ լույս էր տալիս այդ գարշելի տեսարանին, իսկ սենյակի բաց երդիկից ներս էր փչում մի զով քամի և պարզվում էր լուսնի շողքը, որը ուղղակի ընկնում էր խորոված ի կտորների և կիսովին նրանց լափողների վրա:

Հարկահանը մոռացել էր տուրքերը, անդադար խմում էր և ուտում. իսկ ջելեբը թեև ուշ, սակայն, վերջապես, սկսեց մոռանալ իր մտահոգությունը և տավարները:

Երկու պաշտոնյաները քիչ հետո սկսեցին բարձրաձայն վիճաբանություն, հարկահանը մինչև իսկ տաճկերեն երգերի մի այլանդակ խառնուրդ արտադրեց և, վերջ ի վերջո, երկուսն էլ վեր թռան նստած տեղից, բռնեցին միմյանց ձեռք սկսեցին երերալով պար բռնել: Հենց այդ միջոցին էր, որ ջելեբը կանգ առավ, թողեց հարկահանի ձեռքը, հրեց, բաց արավ սենյակի դուռը և գոռաց.

— Չալկի /Նվագածություն:/...

8

Էրզրումի և Խնուս գյուղերի խրճիթները առհասարակ միատեսակ են լինում թե արտաքին և թե ներքին ձևով:

Մանավանդ, հայերինը, որոնք քաղաքի մեջն անգամ ունեն նույն խոհանոցի նմանող մեծ սրահը երդիկով, թոնիրներով, սաքյուներով և մառաններով:

Սերգո քեհյայի խրճիթը, Աղջամելիքի լավ խրճիթներից մեկը լինելով, կազմված էր մի քանի կտորներից կենտրոնում գտնվում էր մեծ կլոր սրահը, որի մեջն էին թոնիրները, ալրատունը /Մի մեծ դարան է, որի մեջ ալյուր են պահում/:, պատերի տակ շարված զանազան մեծության կարասներ, պղնձեղեններ և ամեն ինչ որ պետք էր Սերգոյի ընտանիքի համար, սկսած անկողնից մինչև ավելը և պատի մի անկյունում դեպի վեր ցցած բահն ու թիակը: Այդտեղից երկու դուռ բացվում էր մեկը դեպի փողոցի նրբանցքը, իսկ մյուսը՝ օդան: Օդան սրահից բարձրանում էին չորս քարյա սանդուխներով: Սենյակների շուրջը գտնվում էին քեհյայի ախոռը և մարագը, որոնց կողմից երբեմն լսվում էին կովերի բառաչներ և մեկ-մեկ էլ՝ մի էշի զիլ զռոց:

Երբ ջելեբը և հարկահանը սենյակում նստած ուտում և խմում էին, Սերգո քեհյան գյուղական քահանայի և մի քանի զանազան հասակի անձերի հետ նստել էին սրահում մի բարձր սաքուի վրա. նրանց շրջանի մեջտեղը մի բարձր ճրագկալի վրայից լուսավորում էր մի ձեթե կանթեղ, որը հազիվ-հազ լույս էր ձգում սրահի մի հեռավոր անկյունը, ուր կծկվել նստել էին մի երկու կանայք և անլսելի ձայնով կռացած միմյանց ականջին փսփսում էին, վախենալով նախ՝ խանգարել սաքուի վրա շրջան կազմած լռությամբ ծխող քեհյային և ընկերության և երկրորդ, որը առավելն էր՝ օդայի մեջ քեֆ անող երկու պաշտոնյաներին:

Տեսարանն այսպես էր. սրահում ոչ մի ձայն չէր լսվում. օդայից դուրս մղվող խառնաձայն խայտառակ երգն էր, որ գալիս, խզում էր այդ լռությունը և, բացի դրանից, մի ինչ-որ խուլ շշուկ էլ դրսից միանում էր դրանց:

Դրսումն անձրևում էր և ընկնելով կտուրի վրա շառաչում էր, ու իր կաթիլները բաց երդիկի վրա դրված գմբեթաձև թղթյա վեղարի ծակոտիկներից ներս ցայտելով, պսպղում էր ու ընկնում, թրջում էր սրահի մի փոքրիկ կողմը:

Դրսում անձրևից բացի ոչ ոք չէր խառնում գիշերային լռությունը. գյուղական շները վաղուց լռել էին, քամին դադարել և Խնուսի մեջ սովորական աշնանային հորդ անձրևն առատությամբ ողողում էր Աղջամելիքը:

Սերգո քեհյան լուռ էր. լուռ էին նաև նրա բոլոր ընկերակիցները. կանթեղը պլպլում էր. վայրկենապես լուսավորում այդ վշտաբեկ մտահոգ դեմքերը, որոնք կռացած նմանվում էին մտածելու անընդունակ ստրուկների:

Տեսարանն այդ էր, երբ հանկարծ մեղմությամբ ճռնչեց սրահի վրա բացվող փողոցի դուռը, և նրա շեմքի վրա երևաց մի երկարահասակ մարդ, առողջ և ամրակազմ, կարմիր թշերով, կոշտ ընչացքով, մեծ սև-սև աշխույժ աչքերով, որոնք փայլում էին կես մթության մեջ:

Այդ անձը, որն իր հագուստով չէր զանազանվում սաքուի վրա բազմածներից, մի հայացք ձգեց խրճիթի ներսը, նախ իր ձեռքի մեծ ցուպն առաջացրեց, հետո՝ աջ ոտքը և ակնարկն ուղղելով սաքուի վրա բազմողներին, որոնք նայում էին նրան, ասեց.

— Բարի երեկո ձեզ:

— Ռզկոն է...— խոսեց քեհյան դառնալով իր ընկերներին,— ա՛յ, աստծու բարին, Ռզկո,— ժպտալով դարձավ մտնողին քրդերեն լեզվով,— տնաշեն, այդ ինչ տեսակ մտնել էր, վախեցրիր մեզ:

— Վախեցա խանգարել ձեր քեֆը,— ժպտաց Ռզկոն մի քայլ ևս առաջանալով դեպի սաքուն:

— Այ լավ քեֆ,— ժպտաց դառնությամբ քահանան, համեցեք, վեր ելիր, արի դու էլ մեզ հետ քեֆ արա:

Ռզկոն բարձրացավ, բայց լսելով օդայից դուրս ժայթքող երգերի խռպոտ ձայները, կանգ առավ, նայեց քեհյայի երեսին և ժպտալով ասեց.

— Էֆենդինե՞րն են... աֆֆարիմ, քաղաքի էֆենդիները գիշերային բյուլբյուլներից քաղցր են երգում...

— Սս, սուս,— վախեցած կտրեց նրա խոսքը քահանան, կլսեն անօրեններն ու...

— Թող լսեն,— ասեց Ռզկոն նստելով և հաստ ցուպը ծնկների վրա դնելով,— սո՞ւտ եմ ասում...

— Ամեն ճշտություն մի՞թե կարելի է ասել,— դիմեց մի գյուղացի:

— Իհարկե ոչ, եթե ասողները ձեզ պես քաջ մարդիկ կլինեն,— դիմեց Ռզկոն...— Է, ասեք տեսնենք, այս ինչու եք հավաքվել այստեղ և «լալ-օինի» /Դա մի տեսակ խաղ է, որի ընթացքում բռնավոր կառավարիչն ամեն տեսակ նեղություններ և ապտակներ է տալիս խաղացողներին, որոնք պարտավոր են լռել և չդժգոհել իսկ. ձայն հանողն իսկույն խստությամբ պատժվում է:/ խաղում...

— Էլի Ռզկոն իր սրախոսությունները սկսեց,— ժպտաց քահանան, որը գյուղի մեջ նույնպես սրախոսի անուն ուներ, եթե դու լինես մեր տեղը ոչ միայն «լալ-օինի» կխաղաս, այլև աքլորի նման կկանչես... դու այն ասա, թե հայրդ ինչպես է մտածում, դուք ի՞նչ պիտի անեք:

— Հա՞յրս,— ասեց Ռզկոն,— հայրս ոչինչ չէ մտածում, որովհետև մտածելու էլ ոչինչ չկա. նա իր տուրքերը տվել է և մտադիր չէ ավելորդ տուրք տալ:

— Դե, ամեն մարդ էլ խո Շերիֆ աղա չէ կարող լինել,— խոսեց մի ծերունի,— հայրդ քաղաքում պաշտպաններ ունի, ինչ որ ուզի, կարող է անել:

— Իզուր եք այդպես մտածում,— ասեց Ռզկոն,— հայրս երբեք դեմ չէ հարկ վճարելու, անասունի գլուխ 3,5 ղուրուշ տուրք է նշանակվել. նա տվել է և քոչան էլ ունի:

— Էհ,— մեջ մտավ քահանան,— մեզնից շատերն էլ ունեն այդ թղթի կտորներից, բայց որ օգուտ չունի. հարկահանն անպատճառ ուզում է իր տետրակը մի քանի հազար ղուրուշով ծախել:

— Բացի դրանից,— ասեց քեհյան,— մեզնից շատերն էլ, կարծելով, թե այդ թղթի կտորները ոչինչ են, երբ տուրքդ վճարել պրծել ես, կորցրել են թղթերը... այ, օրինակի համար, մի քիչ առաջ ինձնից քոչանն ուզեց. մեր պստիկը քոչանը պատռտել է և բանից դուրս է գալիս. որ հարկահանը խիստ մոռացկոտ մարդ է եղել. գիտե՞ս ինչ էր ասում. «բոլորիդ կաշին քերթել կտամ,— ասում էր,— եթե տուրքերը չբերեք»,— ասում էր:

Ռզկոն, Շերիֆ աղայի այդ առողջակազմ որդին, նայեց ամենքի երեսին, հետո հազաց և ասեց.

— Լսեցեք ինչ եմ ասում... հայրս իմացավ, որ ջելեբը և հարկահանն այստեղ են եկել, ուստի ինձ ուղարկեց ձեզ մոտ...

Այդ միջոցին էր, որ հարկահավաքի ձեռքը թողնելով, հարբած ջելեբը ցատկեց դեպի օդայի դուռը, հրեց, բաց արավ, գլուխը դուրս պարզեց և որոտընդոստ խռպոտ ձայնով գոչեց.

— Չալկի...

Այդ ձայնը ընդհատեց Ռզկոյի խոսքը, իսկ վեր թռցրեց քեհյային և մյուսներին:

— Քեհյա,— գոռաց նորից ջելեբը այնպիսի ձայնով, որ քնած մանուկները զարթնեցին, թառած հավերը կչկչացին, իսկ շունը ախոռի մեջ հաչեց:

— Քեհյա... չալկի, շուտ... չալկի բերել տուր:

Քեհյան ցատկեց առաջ և ուզում էր սաքուից ցած վազել դեպի հարկահանը, բայց Ռզկոն արագությամբ բռնեց նրա թևից և հեգնական ձայնով պատասխանեց ջելեբի խոսքերին.

— Աղա, սաստիկ անձրևից չալկջիի չալկին փչացել է:

Ջելեբը որչափ որ հարբած էր, այնուամենայնիվ, զգաց, որ խոսողը քեհյան չէր. զարմացած կանգ առավ, հենվեց դռան և ասեց.

— Այդ ո՞վ է խոսողը, քեհյա:

Քեհյան նորից ուզեց ցած վազել, բայց Ռզկոն ուժգնությամբ քաշեց, նստեցրեց նրան և ինքը երերցնելով իր մեծ դեմքը աղոտ լույսի մեջ, ասեց.

— Այդ մի մարդ է, ջելեբ էֆենդի, մի մարդ է, որ ձեզ ասում է թե Աղջամելիքը չալկջի չունի և ունենա էլ այս անձրևին ոչ ոք չի գա:

— Քեհյա՛,— որոտաց ջելեբը,— որտե՞ղ է քեհյան:

— Սպասիր,— մեջ մտավ հարկահանը, որը կարողացել էր երերալով մոտենալ ջելեբին և բռնել նրա թևիցը,— սպասիր,— հարեց նա ուժգնությամբ հրելով ջելեբին,— նախ և առաջ օղիի շիշը պիտի լցնել, դատարկվել է:

— Ա,— գոչեց Ռզկոն բարկացայտ և կոտրելու չափ սեղմելով քեհյայի թևը,— դուք օղի էլ եք գտել սրանց համար և այստեղ մյուսուլմաններ կան, որոնք գյավուրների տան մեջ զբաղված են պիղծ արբեցողությամբ...

— Ո՞վ է այդ անօրենը,— ոտքը առաջ ձգեց ջելեբը իջավ սրահ,— ո՞վ է, որ համարձակվում է մեզ հետ խոսել:

Քեհյան տեսավ, որ բանը վատ էր լինելու, ճիգ գործելով կարողացավ ազատել իր թևը, վազեց դեպի ցած, վախվխելով մոտ գնաց ջելեբին և խոնարհությամբ ասեց.

— Աղա... աստծու սիրուն, հանդարտեցեք, ձեր հրամանները կկատարվեն:

— Այդպես,— հանդարտվեց ջելեբը և ետ դարձավ դեպի օդան,— շուտ չալկջի և օղի, իսկ առավոտյան մենք կտեսնենք, թե ձեզնից ո՞րն էր այն լիրբ խոսքեր խոսողը, այժմ ես փոքր-ինչ քեֆով եմ. իսկ էգուց... Օ՛, ես նրա կաշին պիտի քերթեմ...

Եվ ներս մտավ օդան, առջևից դեպի ներս հրելով հարկահանին:

Երբ դուռը պիտի փակեր, կիսովին ետ դարձավ դեպի քեհյան և ասեց խստությամբ.

— Սերգո քեհյա, ներս արի, քեզ հետ գործ ունեմ:

Քեհյան մտավ ներս. ջելեբը գնաց դեպի օթոցը, նստեց նրա վրա, թողեց, որ հարկահանը ընկնի կողքին և դառնալով դեպի Սերգոն, որը ձեռքերը կրծքին դրած սպասում էր, ասեց խստությամբ.

— Հըմ... Սերգո քեհյա, դու կարծում ես, որ Մուստաֆան այնքան հարբած էր, որ ոչինչ չիմացա՞վ:

Քեհյան գունաթափվեց և կմկմաց.

— Ի՞նչ, աղա:

— Ի՞նչ, գյավուր, ես քեզ ցույց կտամ «ինչը»... դու համարձակվում ես թողնել, որ այն ըմբոստ մոլլայի որդին ծաղրե ինձ, դու համարձակվում ես մյուսուլմաններին իմաց տալ, որ մենք այստեղ զբաղված ենք արգելված խմելիք գործածելով:

— Վա՛հ...— մեջ մտավ հարկահանը ցատկելով տեղից և մոտենալով քեհյային,— դու այդ արե՞լ ես, գյավուր... ես քեզ...

Բարձրացրեց ձեռքը և մի քայլ արեց դեպի գունաթափ և լեղապատառ եղած դողացող հային, որը ավելի ևս կծվեց, բայց ջելեբը շտապով բռնեց հարկահանի բարձրացրած ձեռքը:

— Հանդարտ կաց, Իզեդդին էֆենդի,— ասեց նա հրելով և ձգելով հարկահանին դեպի օթոցը,— այս գյավուրի հետ ես պիտի գործ տեսնեմ... մոտ եկ, քեհյա...

Քեհյան վախվխելով մոտեցավ:

— Լսիր, Սերգո քեհյա,— գոչեց խստությամբ ջելեբը,— այս րոպեիս կերթաս ու դուրս կանես տնիցդ այդ լիրբ մոլլայի լիրբ որդուն, ապա թե ոչ, աստված գիտե, Իզեդդին էֆենդին շատ բարկացկոտ է, կկանչի սուվարիներին ու մի ժամից հետո տունդ գլխիդ փլեցնել կտա...

— Այո,— ոռնաց հարկահանը,— ես շատ բարկացկոտ եմ և կանեմ, աստված գիտե, որ կանեմ... այ, այս րոպեիս և՛ս կանեմ... սուվարիներ...— ոռնաց նա, կամենալով դեպի դուռը գնալ:

— Սպասիր, սպասիր,— բռնեց նրա թևը ջելեբը,— մեղք է Սերգոն, սա էլ մերն է, խեղճ է, սա ինչ մեղավոր է, որ լիրբը եկել է այստեղ... նստիր, Սերգոն մեղք չունի և նրան պիտի խղճալ, մեր Սերգոն է...

— Աստված կյանք տա, աղա, աստված օրերդ երկարացնե,— կմկմաց քեհյան, որ հարկահավաքի խոսքերից քիչ մնաց մեռներ:

— Այդպես ուրեմն,— շարունակեց ջելեբը,— կերթաս և նրան դուրս կանես այստեղից, հասկանո՞ւմ ես... և իմ ձին էլ պատրաստել կտաս:

— Ձի՞ն,— նորից մեջ մտավ հարկահանը,— ինչու, որտե՞ղ ես ուզում գնալ:

— Քիչ ուզում եմ օդ ծծել դաշտերում,— ժպտաց ջելեբը, որը կարծես հետզհետե սկսում էր լրջանալ:

— Սաստիկ անձրև է գալիս, աղա,— մեջ մտավ քեհյան:

— Ավելի լավ,— ասեց ջելեբը,— գլուխս սաստիկ ցավում է, ուզում եմ քիչ օդ ծծել:

— Իսկ իմ քունս տանում է,— ասեց հարկահանը և պարզվեց օթոցի վրա,— ես էլ կքնեմ:

— Լավ կանես... հա, այդպես,— դարձավ ջելեբը քեհյային,— դուրս կանես այդ լրբին և ձիս կպատրաստես... կես-գիշեր կլինի՞:

— Կլինի:

— Լավ... կանցնես սուվարիների մոտ էլ և Շեֆքի չավուշին կասես, որ ջելեբը հրամայում էր, որ կարող են քնել հանգիստ... հասկացա՞ր, Շեֆքի չավուշին կասես...

— Հասկացա, աղա,— ասեց քեհյան,— որը սկսում էր ուրախանալ, տեսնելով, թե ինչպես էժան ազատվեց ջելեբի բարկությունից:

— Հա,— շարունակեց ջելեբը,— Սերգո քեհյա, այդ մոլլայի որդին քիչ լիրբն է երևում, ղալմաղալ չսարքես, որքան կարող ես քաղաքավարությամբ խնդրիր, որ հեռանա... բայց, տես, անպատճառ հեռացնես... և մի մոռանա, այնպես արա, որ կռիվ չդուրս գա... քաղաքավարությամբ վարվիր... գնա:

Քեհյան քայլեց դեպի դուռը:

— Քաղաքավարությամբ վարվիր այդ անզգամի հետ,— կրկնեց ջելեբը նրա ետևից:

— Հրամանք ես, աղա,— ասեց քեհյան մոտենալով դռան:

— Ձին շուտով թամբիր:

— Հրամանք ես, աղա,— ասեց քեհյան և դուռը բաց արավ:

— Շեֆքի չավուշին ասա, որ հանգստությամբ քնեն և շուտով, հասկացա՞ր...

— Հասկացա, աղա,— ասեց քեհյան և դուրս գնաց:

— Սաքուի վրա նստածները լուռ դիտում էին այդ տեսարանը:

9

Սերգո քեհյան օդայից դուրս գալուց հետո կանգ առավ թոնրի կողքին և մտախոհ ծոծրակը քորեց:

Քահանան, Ռզկոն և մյուսները զարմացած դիտում էին նրան:

— Սերգո, Սերգո,— կանչեց քահանան շշուկով,— վեր արի, այդ ի՞նչ եղավ քեզ:

Սերգոն վեր նայեց, խեթ աչքով մի ակնարկ ձգեց Ռզկոյի վրա, հետո սենյակի մի անկյունում խլրտող կանանց և մանուկների վրա գոռաց, որ քնեն, և դանդաղությամբ բարձրացավ դեպի սաքուն:

Բարձրացավ, հուսահատ դեմքով նստեց քահանայի մոտ և նորից նայեց Ռզկոյին:

— Հը, ի՞նչ է եղել,— հարցրեց Ռզկոն բարձր ձայնով,— ինչո՞ւ ես այդպես նայում ինձ:

— Կամաց խոսիր, աստծու սիրուն,— ասեց քեհյան,— առանց էն էլ կատաղել են, որ դու այդպես հանդուգն խոսքեր ասեցիր:

— Բարկացել են, թող գլուխները անձրևին տան, լո... /Քրդական մի բացականչություն է, որ նշանակում է «այ մարդ» կամ «էյ»:/ գոչեց Ռզկոն,— ձեզ ի՞նչ կա վախենալու. օրենքի առաջ ոչ մյուսուլման կա, ոչ հայ, ոչ մեջք ունեցող կա, ոչ էլ անմեջք. օրենքի առջև ամենքն էլ հավասար են, իսկ օրենքը թույլ չէ տալիս, որ երկու լրբեր գան տունդ, ձրի ուտեն, խմեն, քեզ լեղապատառ անեն, կնկանդ, երեխաներիդ վախեցնեն ավելորդ հարկ վերցնելով՝ տավարդ չնչին գնով առնեն ու ծիծաղեն վրադ, հասկանո՞ւմ եք, լո, օրենքն այդ թույլ չի տալիս:

— Գիտես ի՞նչ կա, Ռզկո,— մեջ մտավ քեհյան,— հարկահանը շատ բարկացկոտ մարդ է երևում. օրենք-բան չէ հասկանում և քո քարոզներդ ավելի կատաղեցնում են նրան. թե ինձ սիրում ես, թե որ ուզում ես, որ մեր տունը չքանդեն, վեր կաց գնա տունդ...

— Աա՛... ծիծաղեց Ռզկոն,— երևի նրանք քեզ հրամայել են, որ ինձ դուրս անես, լավ...

— Չէ, Ռզկո,— շտապեց ասել քեհյան,— դուրս անել չէ, աստված գիտե, որ չէ. բայց բարկացել են, գիտես, անօրեն են, որ ուզեցին, տունուտեղս կքանդեն... արդեն կես գիշեր էլ է, քնելու ժամանակ է:

— Լավ, լավ, — ասեց արհամարհությամբ Ռզկոն,— մեկ կողմ թող այդ ձևերը, ես երեխա չեմ. հասկանում եմ, նրանք քեզ հրամայեցին, որ դուրս անես ինձ. վնաս չունի, ես չեմ ուզում քեզ լեղապատառ անել և կերթամ, սակայն, երթալուց առաջ մի բան պիտի հարցնեմ քեզ:

— Հարցուր, ղուրբան, տասը բան հարցուր,— ասեց քեհյան ուրախացած, որ այդպես հեշտությամբ համոզեց քուրդին՝ հեռանալու:

— Ուրախացա՞ր, որ հեշտ համոզեցիր,— ժպտաց Ռզկոն արհամարհությամբ,— վնաս չունի, ես կերթամ, և դու շարունակիր դրանց ոտները ընկնել... բայց դու ինձ այն ասա, թե ինչու էր ջելեբը քեզ ասում, որ Շեֆքի չավուշին ասես, որ «հանգիստ քնեն»:

— Ինչպե՞ս թե «ինչու»,— զարմացավ քեհյան,— դա շատ հասկանալի է. ուզում էր ասել, թե իրանք գտնվում են մի հավատարիմ մարդու տան մեջ և ոչինչ վախ չունեն, ուստիև սուվարիները կարող են հանգստությամբ քնել:

— Ի՞նչ վախ պիտի ունենային, հարցրեց Ռզկոն,— նրանք չգիտեն, որ ոչ մի հայ, որ մեռնի էլ, ձեռք չի բարձրացնի իրանց նման անիրավների դեմ:

— Երեխա-երեխա խոսում ես,— ժպտաց քահանան,— ով չի վախենա, եթե վրան մի քանի հարյուր լիրա ունենա:

— Մի քանի հարյուր լիրա...— ապշությամբ գոչեցին մյուսները:

— Իհարկե,— ասեց քահանան,— մի մարդ, որ եկել է գյուղերից տավարներ առնելու, այդքան փող կունենա մոտը:

— Այդ լավ հիշեցրիր ինձ, տերտեր,— խոսեց քեհյան,— իսկի միտս չէր:

Ասեց և ուզեց բարձրանալ:

— Ո՞ւր ես գնում,— բռնեց նրան քահանան:

— Հարբել է ու չի իմանում, թե ինչ է անում,— պատասխանեց քեհյան,— ուզում է ման գալու գնալ այս գիշերով:

— Ո՞վ,— հարցրեց Ռզկոն:

— Ջելեբը,— ասեց քեհյան,— հիմա ինձ ասում էր, որ ձին պատրաստեմ, որովհետև ուզում է գնալ դաշտերում քիչ օդ ծծել:

— Այս անձրևո՞վ:

— Հարբել է,— ժպտաց քեհյան,— ասում էր, որ գլուխը ցավում է. կերթամ ու չեմ թողնի, որ գնա:

Ռզկոյի աչքերը փայլեցին. նա արագությամբ բռնեց քեհյայի թևից և հրեց իր տեղը:

— Նստիր,— գոռաց նա սպառնալից: Քեհյան և մյուսներն ապշած՝ Ռզկոյի այդ հանկարծական բարկությունը դիտեցին:

— Նստիր,— ասեց Ռզկոն աշխատելով իր նախկին ձայնը ստանալ,— քե՞զ ինչ. թող երթա ման գալու, գուցե մի փոսի մեջ ընկնի մենք էլ ազատվենք ձեռքիցը:

— Այ ասում ես, հա,— ասեց քեհյան,— այդպես լինի, որ հետո մեզ քարշ տան քաղաք իբր մարդասպանների՞. չէ, ախպեր, ես չեմ թողնի, որ այդ դրության մեջ նա դուրս գա տնիցս:

— Սերգո,— ասեց Ռզկոն,— նստիր և թող ջելեբը իր ուզածն անի, ապա թե ոչ, աստված գիտե, որ ձեռքիցս չես պրծնի: Տո, ախմախ, ով քեզ մարդասպան կասի, երբ ջելեբի դիակը գտնվի մի ժայռի տակ կտոր-կտոր եղած և կամ մի ջրի փոսի մեջ՝ խեղդված:

— Իրավ է,— ասում Ռզկոն,— դիտեց մի ուրիշը,— քեզ ի՞նչ գործ, քեհյա, քեզ ասել է ձին պատրաստիր, դու էլ արա, քեզ ի՞նչ թե նա վտանգի հանդիպի:

— Իսկ եթե մեզ մեղադրեն, հետո՞,— հարցրեց քեհյան վարանելով:

— Լո,— ասեց Ռզկոն աշխույժով,— ոչ ոք քեզ չի մեղադրի. դու վկաներ ունես, որ նա հարբած էր և բացի դրանից, ասում եմ քեզ, հարբածները շատ կամակոր են լինում, եթե սկսես նրանց խորհուրդ տալ, գլուխդ կջարդեն... գնա, գնա ինչ որ ասել է քեզ, դու այն արա և ձայնդ կտրիր:

Ասեց և, ոտքի ելնելով, ցուպն առավ:

— Գնո՞ւմ ես,— հարցրեց քահանան:

— Ի՞նչ անեմ,— ժպտաց Ռզկոն,— ես այնքան սիրում եմ Սերգոյին, և հորս լավ բարեկամն է, որ ստիպված եմ գնալ:

— Աստված կյանք տա հորդ,— ասեց քեհյան ոտի ելնելով,— ես էլ գնամ ձին պատրաստեմ:

— Հա, գնանք ուրեմն, բարի գիշեր, աղաներ,— ասեց Ռզկոն և ցած իջավ սաքուից:

Նրա ետևից իջավ քեհյան:

— Շուտ կգա՞ս, Սերգո,— հարցրեց քահանան:

— Մենք էլ գնանք,— ասեց մեկը,— կես-գիշեր է, դրանք էլ հարբել են:

— Լավ էլ կանեք,— դիտեց Ռզկոն ցածից,— գնացեք քնեք ու լավ-լավ երազներ տեսեք:

Եվ բոլորն էլ դուրս գնացին խրճիթից:

Փողոցում նրանք միմյանց բարի գիշեր մաղթելուց հետո շտապեցին փախչել հեղեղի նման տեղացող անձրևի տակից. իսկ Ռզկոն մի քանի քայլ առաջանալուց հետո կանգ առավ, շուրջը նայեց և երբ տեսավ, որ մենակ է, կուլաբը գլխին քաշելով, դիմեց դեպի մի դուռ, մտավ մի ստվերի տակը, ցուպը ոտների մեջ առնելով նստեց և կծկվեց մի կողմում:

Ամեն կողմ տիրում էր լռություն. միմիայն լսվում էր անձրևի խշխշոցը և երբեմն էլ գյուղի զանազան ծայրերից շների ձայներ:

— Ֆուհ,— մռմռաց Ռզկոն,— ի՞նչ վատ անձրև է...

Եվ լռեց այլևս:

Չէր անցել տասը րոպե, երբ նա լսեց, որ մի ոտնաձայն է գալիս և բացվում է քեհյայի խրճիթի դուռը:

— Նա է,— մռմռաց Ռզկոն, աշխատելով ծածկվել մթության մեջ:

Քիչ հետո նա տեսավ, թե ինչպես մեկը, դուրս քաշելով խրճիթի դռնից մի ձի, հեծավ, մտրակեց և տաճկերեն ասեց.

— Ինչ հիմար անձրև է. թրջվելը երկու ոսկի չարժե:

Ռզկոն գլուխը պարզեց, և երբ ձիավորը գալիս, իր կողքից էր անցնում, անշարժ մնաց ու աշխատեց տեսնել ձիավորին:

— Ա՛,— մռմռաց նա զարմացած, երբ ձիավորն անցել էր,— Շեֆքի չավուշն էր... այստեղ մի բան կա, որ փոխանակ քնելու, ձի են հեծնում և պտույտի գնում:

Ձիավորն անհետանում էր. Ռզկոն բարձրացավ, արագությամբ մագլցեց պատից, իջավ կտուրի վրա և աշխատեց տեսնել, թե ուր էր գնում չավուշը:

Ձիավորը սրարշավ անցավ գյուղի աղբյուրի մոտից, հետո ծռվեց դեպի Շերիֆ աղայի փողոցը, պահ մի աներևույթ մնալուց հետո, նորից երևաց մյուս ծայրում, և արշավակի իջավ դեպի բլրակը:

— Հը՛մ... — մռմռաց Ռզկոն,— Քոփալ է գնում:

Հետո իջավ ցած ու նորից կծկվելով, մտավ դռան ստվերի մեջ:

Քիչ հետո նորից բացվեց քեհյայի խրճիթի դուռը և այս անգամ քեհյան էր, որը մի ձեռքում մի կանթեղ բռնած, մյուսով դուրս էր քաշում ջելեբի ձին. իսկ ինքը՝ ջելեբը, հրացանը ձեռքին հետևում էր ձիուն:

Երբ ձին դուրս եկավ, ջելեբը հրացանը կախեց ուսից և մոտեցավ ձիուն. քեհյան բռնեց ասպանդակը. ջելեբը հեծավ և ասեց քեհյային.

— Սերգո, գուցե ես ուշ վերադառնամ և կամ թե գիշերս ուրիշ տեղ գնամ. առավոտյան, եթե հարկահանը ինձ կհարցնի, ասա՛, որ շուտով կվերադառնա, մինչև էգուց երեկոյան թող սպասի ինձ և միամիտ կենա:

— Հրամանք ես, աղա,— պատասխանեց քեհյան և ավելացրեց,— էլի աղաչանք եմ անում, աղա, որ այսպիսի մի գիշեր դաշտը գնալը անխոհեմություն է. գիտե՞ս, մեր գյուղի քուրդերը շատ ավազակ մարդիկ են... բացի դրանից գյուղի չորս կողմը փոս, ժայռ ու անդունդներ շատ են պատահում:

— Իզուր ես մտածում, քեհյա,— ասեց ջելեբը,— ես քո կարծածիդ չափ էլ հարբած չեմ և հետս զենքեր ունեմ:

— Էլի,— ասեց քեհյան,— քո կյանքդ ինձ համար թանկ է. կրկնում եմ, որ մեր գյուղի քուրդերն ավազակ մարդիկ են...

— Միամիտ կաց,— ասեց ջելեբը և մտրակեց ձին:

Ռզկոն, որն այդ բոլորը լսում էր, կատաղությամբ ատամները կրճտեցրեց և մռմռաց.

— Ստոր, ցած գյավուր...

Ջելեբը մտրակեց ձին. Ռզկոն կծկվեց և ձիավորը՝ առանց նկատելու նրան, անցավ, մինչդեռ քեհյան դռան վրա պահ մի կանգնելուց հետո ներս էր մտնում և դուռը ետևից փակում:

Ռզկոն ցատկեց պահված տեղից, նորից մագլցելով պատն ի վեր, բարձրացավ կտուրը և նայեց հեռացող ջելեբի ետևից:

Ձելեբը նույնպես անցավ գյուղի աղբյուրի մոտից, նույնպես մտավ Շերիֆ աղայենց փողոցը և շուտով մյուս ծայրից դուրս գալով, արշավակի իջավ դեպի բլրակը, որից հետո՝ դեպի Քոփալ գյուղը:

— Ա՜…— մատը կծեց Ռզկոն,— այժմ հասկացանք… այստեղ մի բան կա, որ երկու հոգով է կատարվում… հոգ չէ, մենք էլ տասը հոգի կլինենք:

Պահ մի մտածեց, հետո գլուխը ցնցեց, արագությամբ ցած թռավ կտուրից և վազնիվազ մեկնելով, անհետացավ գյուղի փողոցների մեջ:

Անձրևը շարունակում էր տեղալ. երկու ձիավորների ոտնաձայները զարթեցրել էին մի քանի շների, որոնք հաչում էին: Այժմ նրանք էլ լռեցին և քիչ հետո անձրևն էր միայն, որ շառաչմամբ տեղում էր կտուրների և փողոցների վրա…

10

Դրանից մի քանի օր հետո, Խնուսի Քոփալ գյուղից ոչ շատ հեռու, մի ձորակի մեջ գտան սպանված ջելեբ Մուստաֆայի դիակը՝ մեռցնելու չափ ծեծված Շեֆքի չավուշի և երկու վիրավորված թուրքերի միջում:

Հարցուփորձից իմացվել էր, որ ջելեբ Մուստաֆան Քոփալից իր տավարների նախիրը Խնուս տանելու ժամանակ, ձորակում հարձակում էր կրել 10 ձիավոր քուրդերից, սպանվել էր և տավարներից զրկվել:

Քննությունից էլ հայտնվել էր, որ այդ տավարները վերադարձվել էին Քոփալ, որ գյուղացիները մինչև վերջը պնդում էին, որ իրանք և ոչ մի տավար չեն ծախել ջելեբ Մուստաֆային:

Բանը այն էր, որ քոփալցիները քթի տակից ծիծաղելով քննիչների վրա, այնքան վարպետությամբ պատասխաններ տվին, որ ոչ ոք չկարողացավ հաստատել, թե նրանք իրանց տավարներից ծախել էին Մուստաֆային:

Իսկ տավարները, ջելեբի առաջնորդությամբ գիշերային մի պտույտ անելուց հետո, առավոտյան դեմ բերվել էին իրանց ախոռները:

Քննիչները դիմեցին Շեֆքի չավուշին, և երբ նա փոքր-ինչ կազդուրվելուց հետո հարցուփորձի ենթարկվեց, իր տված տեղեկությունները կազմեցին այսպիսի հոդվածներ:

Ձելեբին սպանող, իրան ծեծող և տավարները հափշտակողները հագնվել էին քուրդի պես և խոսում էին քրդերեն: Նրանց մեջ նա հիշում էր մի լայնալանջ հսկա քուրդի, որը ցուպի մի հարվածով թռցրել էր իր հրացանը ձեռքից:

Աղջամելիքից մեկնելու մասին, բացի Սերգո քեյայից, ոչ ոք տեղեկություն չուներ. ուրեմն այդ սպանության մեջ գլխավոր գործողը հայ քեհյան էր:

Քննիչները այս երկրորդ հոդվածը կազմելուց հետո մատները կծեցին և զարմացած գոչեցին.

— Տեսնո՞ւմ եք, գյավուրներն էլ են ավազակություն անում:

Մի քանի օր հետո հարկահանն էլ քաղաք իջավ և իր քիթը կոխեց այդ գործի մեջ: Փորձեց ձեռք տալ Շերիֆ աղային, բայց տեսավ, որ այդ քուրդի քաղաքային մեջքը բավական ամուր էր և

անմատչելի, ուստի ինքն էլ, մի «լավ մյուսուլման», պարտք համարեց հայտնել, որ ավազակները անպատճառ հայեր «պիտի լինեին»...

Շտապով քննիչները իրենց վճիռը կայացրին, սուվարիներ ուղարկեցին դեպի Խնուս, հեռագրեցին այս-այն կողմ, որ եթե Աղջամելիքից փախչող հայեր լինեն, իսկույն բռնեն կամ մեռած և կամ կենդանի:

Հեռագիրները իզուր անցան, որովհետև սուվարիները ձիեր ճաթեցնելով Խնուս հասան և զարմացան, որ բոլորին էլ բռնեցին գյուղի մեջ առանց ընդդիմադրության:

Եվ բոլոր այդ անձերին կապեցին, առին սվիններին առաջ, ծեծելով և տանջելով Խնուս բերդաքաղաք իջեցրին և Խնուսից էլ Էրզրում բերին, սկզբից շատ անգամ ճեպընթացներ ուղարկելով, թե ահա քաջ սուվարիները ավազակներին բռնած՝ քաղաք են բերում:

Այդ արշավանքի պատմությունը Էրզրումի «Էն վարը շաքիե» թերթին բավական նյութ տվավ:

Նոր ճանապարհորդները ասում են, որ Աղջամելիք գյուղը այժմ ոչ թե քսան տուն հայ ունի, այլ 5-6 տուն միայն:

Մնացածները դռնեդուռ, գյուղից գյուղ ընկած՝ հաց և օթևան են մուրում և ապա գնում մեռնելու մի ետ ընկած անկյունում. և եթե տեսել եք այն խեղճ մուրացիկներին, որոնք, գավազանը ձեռքին, քարշ են գալիս քաղաքից քաղաք և գնում սփռվում, անհետանում են Կ. Պոլսից սկսած մինչև Եգիպտոսի խուլ անկյունները, որոնք թողած ամեն ինչ ցրվում են ամեն կողմ, կանգնեցնում յուրաքանչյուր հանդիպողի, ձեռք պարզում և «փշուր մը հաց» խնդրում: Դրանք զանազան աղջամելիքցիների զանազան թշվառ գյուղացիներն են...